

ԻՆՏԵՐՆՅՈՒՄ

Ռադիո և հեռուստատեսային ծրագրերի
ստեղծման էթիկական չափանիշները

*Սույն ժողովածուն կազմվել է մոսկովյան Ինտերնյուսի
համար:*

*Պատրաստված է միջազգային զարգացման
գործակալության /ԱՄՆ/ աջակցությամբ, «Եվրասիա» Ֆոնդի
միջնորդությամբ:*

Գովազդատուն և առևտրային հայտարարությունները

1954 թվականի մայիսի 25-ին, ռադիոյով ու հեռուստատեսությամբ մեկնաբանելով լուրերի և հասարակական-քաղաքական հարաբերությունների լուսաբանման ընթացքում Սի-Բի-Էս-ի կիրառած հիմնական քաղաքականությունը, Ուլյամ Ս. Փեյլին հայտարարել է.

«Գովազդատուն, որ հանդիսանում է մեր կողմից ստեղծված գանկացած լրատվական ծրագրի հովանավոր, ամենևին էլ չի գնում այն և ձեռք չի բերում այդ ծրագիրը վերահսկելու որևէ իրավունք:»

Երկար տարիներ Սի-Բի-Էս-ի ղեկավարությունը խստիվ պահպանել և կենսագործել է այս հիմնարար տեսակետը: Արդյունքում Սի-ԷՆ-Դի-ն և նրա հեռուստահաղորդումներն իսպառ ազատվել են գովազդատուներից ու նրանց ճնշումից: Գոյություն ունեն հետևյալ արմատական ուղղություններն ու ընթացակարգերը, որոնք հարկ է կենսագործել.

- Սի-ԷՆ-Դի-ն չունի վաճառահանման բաժին: Նա չի վաճառում իր ստեղծած ռադիոհեռուստատեսային ծրագրերը: Դրա փոխարեն Սի-ԷՆ-Դի-ի ստեղծած ռադիոհաղորդումների առևտրային ժամանակի վաճառքով զբաղվում է Սի-Բի-Էս-ի ռադիոծրագրերի բաժինը: Սի-ԷՆ-Դի-ի ստեղծած հեռուստահաղորդումների առևտրային ժամանակը վաճառում է Սի-Բի-Էս-ի Կաբելային հեռուստածրագրերի բաժինը, և յուրաքանչյուր գովազդատուի սպասարկում է վաճառքով զբաղվող բաժինը:

- Սի-ԷՆ-Դի-ն իրեն է վերապահում իր հաղորդումների բացարձակ վերահսկողության իրավունքը: Հաղորդումները ոչ մի դեպքում չեն հարմարեցվում գովազդատուի ցանկություններին և պահանջներին: Գործատուի խնդրանքները, սցենարները համաձայնեցնելու կամ բովանդակության վերահսկման ցանկացած այլ ձևերի վերաբերյալ, մերժվում են և պետք է մերժվեն:

- Եթե հաղորդումն առնչվում է ոչ վիճելի նյութի հետ, ապա գովազդատուն կարող է դիտել կամ ունկնդրել այն՝ ստեղծումից հետո ցանկացած ժամանակ՝ բացառապես գովազդի որակը գնահատելու, այլ ոչ թե բովանդակության վրա ներազդելու նպատակով: Եթե հաղորդումն առնչվում է վիճելի նյութի հետ, ապա գովազդատուն չի կարող այն դիտել կամ ունկնդրել՝ մինչև Սի-Բի-Էս-ը կամ նրա մասնաճյուղերից մեկը այն չհեռարձակի:

- Եթե հաղորդման որակը չի բավարարում գովազդատուին, որը համաձայնվել է լինել դրա հովանավորը, կամ հաղորդումը չի համապատասխանում այդ գովազդատուի արտադրանքին, ապա գովազդատուին կարելի է թույլ տալ ետ վերցնել իր առևտրային հայտարարությունը և զետեղել այն նորությունների մեկ այլ ծրագրում: Սակայն նման դեպքերում ծրագրի բովանդակությունը չի փոփոխվի:

- Չի թույլատրվում հաղորդման սկզբում կամ վերջում տրվող կարճ գովազդային հայտարարություններում ընդգրկել այնպիսի ձևակերպումներ, որոնք կարող են մոլորեցնել հեռուստադիտողին կամ ռադիոունկնդրին և ստեղծել տպավորություն, թե տվյալ հաղորդումը չէր ստեղծվի, եթե չլիներ գովազդատուի հովանավորչությունը: Ուստի, չի թույլատրվում հաղորդել, թե տվյալ հաղորդումը «ներկայացվում է» գովազդատուի կողմից, գովազդատուի

«շնորհանդեսն» է, կամ «հեռարձակվում է ձեզ համար» գովազդատուի կողմից: Թույլատրվում է հայտնել, որ հաղորդման հովանավորն է գովազդատուն:

- Չի թույլատրվում, որ գովազդատուի կամ նրա արտադրանքի նույնականացումը (իդենտիֆիկացումը) ծրագրի մեջ լինի գովազդային հայտարարությունների համար հատկացված ժամանակից (այն է՝ հաղորդման սկզբում կամ վերջում կամ պարզապես գովազդային հայտարարության համար նախատեսվածից) դուրս: Օրինակ՝ միշտ մերժվել են և առաջիկայում ևս պետք է մերժվեն առևտրային մակնիշի գովազդները ծրագիր վարողի սեղանին այնպես տեղադրելու խնդրանքները, որ կարելի լինի այն տեսնել հաղորդման ընթացքում:

- Սի-էն-Դի-ի թղթակիցները չեն կարող մասնակցել կարճ գովազդային հայտարարություններին հաղորդման սկզբում կամ վերջում, ինչպես նաև հեռուստահաղորդումների ընթացքում տրվող առևտրային հայտարարությունների մուտքերում: Ռադիոհաղորդումների ժամանակ նրանք կարող են հիշատակել արտադրանքի անվանումը կամ հովանավորի անունը (առանց նկարագրական նյութի) հաղորդման սկզբի կամ վերջի կարճ գովազդային հայտարարություններում և կամ առևտրային հայտարարությունները բացելիս:

- Առևտրային հայտարարությունները, որոնք կապված են հաղորդման բովանդակության հետ, և հովանավորները, ովքեր առնչություն ունեն ծրագրերում լուսաբանվելիք հարցերին չեն արգելվում, եթե.

i) տպավորություն չի ստեղծվելու, թե հաղորդման վրա գործատուն որևիցե ազդեցություն է գործել,

ii) առկա է բացահայտ ու միանշանակ տարաբաժանում հաղորդման բովանդակության և գովազդի միջև,

iii) աներկիմաստ հավաստվում է, որ հաղորդումը գտնվում է «Սի-Բի-Էս-Նյուսի բացառիկ վերահսկողության ներքո»:

-Նպատակահարմար չէ առևտրային հայտարարություններ տեղադրել.

i) կրոնական ծրագրերի մեջ,

ii) բացառապես ԱՄՆ-ի նախագահին նվիրված հաղորդումների (կամ մանուկի ասուլիսների) մեջ,

iii) որևէ անձնավորության հիշատակին նվիրված հաղորդման մեջ, եթե նյութն անմիջականորեն կապված է այդ անձի մահվան հետ և հեռարձակվում է նրա մահվանը հաջորդող մի քանի օրվա ընթացքում:

- Քաղաքական հաղորդագրությունները չեն կարող տեղադրվել «թեժ» նորությունների մասին հեռուստատեսային հաղորդումների մեջ: Նման հաղորդագրությունները պետք է անմիջականորեն հարեն այդօրինակ հաղորդումներին, սակայն հովանավորի նույնականացումը պետք է երևա հայտարարության և հաղորդման միջև:

-Քաղաքական հաղորդագրությունները կարող են լինել «թեժ» նորությունների մասին ռադիոհաղորդումների մեջ, եթե՝

i) ձեռնարկվեն նախագուշակական համարժեք միջոցներ նման հայտարարություններն առանձնանացնելու իրենց հարող նորությունների հաղորդումներից,

ii) դրանք մանրակրկիտ ընտրվեն այն հաշվով, որ չլինի նորությունների ծրագրում լուսաբանվող որևէ հարցի հետ անմիջական սերտ կապ ունեցող հաղորդագրություն:

Վերլուծություն և մեկնաբանություններ¹

Վերլուծությունը և մեկնաբանությունը խրախուսվում են: Սակայն որոշ դեպքերում շատ դժվար է լինում զանազանել նյութի սուբյեկտիվ շարադրանքը (ինչն անթույլատրելի է և սահմանափակ բացառումներով նկարագրվում է 6-8 էջերում) վերլուծությունից ու մեկնաբանություններից (որոնք թույլատրվում են): Իբրև արդյունք, տարիների ընթացքում մշակվել են հետևյալ կողմնորոշիչները: Դրանց մեջ տեղ գտած «տեսաբան» և «վերլուծություն» հիշատակումները հավասարապես վերաբերում են «մեկնաբանին» և «մեկնաբանությանը»:

«Նորությունների տեսաբանները կոչված և պարտավոր են պարզաբանել ու մեկնել նորությունները ընդհանուր և մասնագիտական գիտելիքների հիման վրա, որոնք իրենք ունեն կամ որպիսիք տրամադրվել են իրենց տրված կազմակերպության կողմից լրատվական աղբյուրների միջոցով: Նրանք պետք է բազմակողմանիորեն ներկայացնեն փաստերը, բացահայտեն հակասությունները, մատուցեն հայտնի տվյալները և այլն:

Նրանք չպիտի մոռանան այն մասին, որ ժողովրդավարության պայմաններում կարևոր է, որ մարդիկ ոչ միայն իմանան, այլև հասկանան: Տեսաբանների խնդիրը հենց այն է, որ օգնեն ունկնդրին հասկանալ, կշռադատել և հետևություններ անել, այլ ոչ թե եզրահանգումներ կատարեն նրա փոխարեն: Ժամանակի սղության պատճառով հնարավոր չէ լրիվ հստակել նորությունների վերլուծման այս վերջին մոտեցումը: Դրա էությունն են անաչառությունն ու զսպվածությունը» (Ուլյան Ս. Փեյլիի ելույթը 1941 թվականի հունիսի 16-ի միջնահանգային առևտրի գծով սենատական հանձնաժողովում):

«...նորությունների տեսաբանի գործառույթն է որևէ կոնկրետ նյութի վերաբերվող փաստերը դասավորել որոշակի կարգով և, հենվելով իր ընդհանուր կամ մասնագիտական գիտելիքների վրա, այնպես ներկայացնել այդ փաստերը, որպեսզի ոչ թե համոզի իր ունկնդիրներին, այլ տեղեկացնի նրանց: Տեսաբանը պետք է ջանա պարզել ամեն մի հակասություն, համադրելով հայտնի փաստերը, անկողմնակալ լուսաբանել հակասական հարցերը տարբեր կողմերից. կարճ ասած՝ հաղորդել ունեցած ամբողջ ինֆորմացիան, որի միջոցով ունկնդիրներն ինքնուրույն կարողանան եզրահանգման գալ: Իդեալական տարբերակում, երբ խոսքը վերաբերում է վիճելի հարցերին, ունկնդիրները չպետք է մտածեն, թե տեսաբանը փաստորեն, որևէ կողմին համամիտ է» (Սի-Բի-Էս ընկերության անձնակազմին հասցեագրած Փոլ Ուայթի հուշագիրը՝ երկրորդ համաշխարհային պատերազմի ժամանակ):

«Ինչպես նորություններ հաղորդելիս, այնպես էլ դրանք վերլուծելիս նորությունների հաղորդավարի կամ տեսաբանի նպատակը պետք է լինի օբյեկտիվությունը: Կարծում են, մենք ընդունում ենք, որ մարդու բնույթն այնպիսին է, որ ոչ մի թղթակից կատարելապես ազատ չէ իր սեփական կանխակալ կարծիքից, փորձից ու տեսակետներից, և դրա հետևանքով 100-

¹ Շատ տարիների ընթացքում (մինչև 1974 թվականը) Սի-Էն-Դի-ի տեսաբանների կողմից «վերլուծություն» տերմինն օգտագործվում էր վերլուծական նյութի բոլոր տեսակների նկարագրման համար: Ներկայումս այն օգտագործվում է սոսկ այնպիսի վերլուծական նյութերի նկարագրման համար, որոնք հետևում են անմիջականորեն պրեզիդենտի կամ այլ ելույթներին: Վերլուծական նյութի բոլոր մյուս տեսակներն այժմ անվանվում են «մեկնաբանություններ»: Այս տարբերակումը կրում է սոսկ անվանակարգային բնույթ և չի վերաբերվում հարցի էությանը:

տոկոսանոց օբյեկտիվություն միշտ չէ, որ հնարավոր է: Սակայն կարևոր է, որպեսզի նորությունների հաղորդավարը կամ տեսաբանը ունենա օբյեկտիվ լինելու կամք ու մտադրություն: Այդպիսի կամքն ու մտադրությունը, որոնք արմատավորվել են և իսկապես ներհատուկ են իրեն, օբյեկտիվության լավագույն երաշխիքներն են: Նրա խնդիրն այն պիտի լինի, որ ունկնդրին հնարավորություն ընձեռի իմանալ փաստերը, ուշադիր գնահատել դրանք՝ լավագույնս ճշտելով սեփական դիրքորոշումը»: (Պր-ն Փեյլիի «Պատասխանատվության ուղին» ելույթը 1954 թվականի մայիսի 25-ին):

«...Ընդունված է, որ, հավանաբար, հեշտ չէ գծել այն սահմանը, որով նորությունների վերլուծությունը տարբերվում է նյութի սուբյեկտիվ շարադրանքից. հեշտ չէ այն պատճառով, որ լավ վերլուծությունը կարող է հուշել եզրակացություն և այդ իմաստով նյութի սուբյեկտիվ շարադրանք հիշեցնել: Երբ նման բան է տեղի ունենում, տեսաբանը պետք է հատուկ ուշադրություն դարձնի մատուցվող նյութի լեզվի ընտրությանը, այն հաշվով, որպեսզի ոչ մի տարակույս չթողնի, որ խոսք իսկ չի կարող լինել սուբյեկտիվ շարադրանքի մասին: Խմբագրի տեսակետը շարադրող ծրագրերը վերլուծական ծրագրերից տարբերվում են, օրինակ, նրանով, որ խմբագիրների ծրագրերն առաջարկում են գործողությունների ինչ-որ ընթացք, արժարժում են նորմատիվային դատողություններ կամ բացահայտում անձնական նախապատվություններ, մինչդեռ վերլուծական ծրագրերը, մեկնաբանում են իրադարձությունների նշանակությունը և ջանում պատասխան տալ այսպիսի հարցերի՝ ո՞րն է եղել այսինչ իրադարձության պատճառը և ինչպիսի՞ն կարող են լինել հետևանքները»:

«Թեժ» նորությունների հաղորդման յուրաքանչյուր կետ, որ լիովին կամ գերակշիռ մասով կազմված է մեկնաբանություններից, հայտանշվելու է «մեկնաբանությունը», «նորությունների հակիրճ թողարկումը», «հեռանկարը» և նմանօրինակ այլ տերմինների օգտագործման օգնությամբ, որոնք ցույց կտան, որ իրադարձությունների վերլուծություն է կատարվում:

Փաստական բնույթի լուրջ սխալները պետք է հստակորեն և արագ շտկվեն համապատասխան հաղորդումներում:

Վավերագրական (կամ այլ մեկանգամյա) հաղորդման մեջ թույլ տրված սխալն ընդգրկվում է Սի-Էն-Դի-ի պրեզիդենտի կողմից ընտրված համապատասխան հաղորդման մեջ: Մնացած բոլոր դեպքերում, եթե Սի-Էն-Դի-ի պրեզիդենտը այլ որոշում չի կայացնում, սխալ թույլ տված հաղորդումը պատասխանատվություն է կրում ուղղումը եթեր հեռարձակելու համար:

Սխալը շտկվելու կոչված հաղորդման մեջ պետք է պարզ լինի, որ մենք հեռարձակում ենք ուղղումը:

Չետևաբար՝ բավական չէ սոսկ հայտնել, որ սկզբնական ծրագրում ընդգրկված հաղորդումը չի համապատասխանել իրականությանը: Անհրաժեշտ է հատուկ հաստատել հերքման ճշգրտությունը:

- Բավական չէ պարզապես ճշգրիտ ինֆորմացիա ընդգրկել սխալն ուղղելու կոչված հաղորդման մեջ: Անհրաժեշտ է հատուկ նշել այն փաստը, որ դա ուղղում է:

- Բավական չէ պարզապես ցույց տալ կամ հաղորդել հեռուստադիտողի կամ ռադիոուսնկնդրի նամակը, ուր պնդվում է, որ մենք սխալ ենք թույլ տվել: Անհրաժեշտ է հատուկ ընդունել նման պնդման իրավացիությունը:

Ցույցեր, խոշովություններ և քաղաքացիական այլ անկարգություններ

Գոյություն ունի մի այսպիսի տեսակետ, թե հեռուստատեսությունը խցիկների, լուսավորման տեխնիկայի և անձնակազմի ներկայությամբ բորբոքում կամ խորացնում է անկարգությունները: Այս կարծիքի հենքն այն պնդումն է, թե առանձին դեմքեր կամ մարդկանց խմբեր, որոնք ձգտում են հրովարտակել սեփական դիրքորոշումը, երբեմն «իրենց ցույց են տալիս» խցիկների և միկրոֆոնների առջև:

Եթե մենք անտեսեինք բոլոր այն իրադարձությունները, որոնք ինչ-որ կերպ առնչվում էին մեզ հետ (իրենց ժամանակով, բնույթով կամ այլ գործոններով), երբեք էլ չպիտի կարենայինք հաղորդել մամուլի ասուլիս կամ ըստ էության լուսաբանել ցանկացած այլ իրադարձություն, ի բացառյալ փոթորիկները, ջրհեղեղները կամ ուրիշ բնական աղետներ: Իսկ լրագրողի պարտքը, իհարկե, պարտավորեցնում է մեզ լուսաբանել այն անկարգությունները, որոնք արժանի են դրան՝ նորությունների հաղորդման տեսակետից: Սակայն չափազանց կարևոր է, որ մենք դա անենք

- i) իբրև լրահաղորդ անձ և ոչ թե մասնակից,
- ii) կատարելապես օբյեկտիվ, ստույգ և զուսպ,
- iii) այնքան զգույշ ու նրբանկատ, որչափ հանգամանքներն են թույլ տալիս:

Քանի որ լինում են շատ բազմազան ու բարդ պրոբլեմները, հետևաբար և նպատակների իրագործումը չի կարող երաշխավորվել գործող կանոնների ճշգրիտ ու մեքենայորեն կատարմամբ: Տարիների ընթացքում մշակված ներքոհիշյալ դրույթները պետք է առաջնորդեն ձեզ աշխատանքում:

* Հնարավորության դեպքում սարքավորումներն ու անձնակազմը անկարգությունների վայրը փոխադրելու համար օգտագործեք առանց տարբերանշանների ավտոմեքենաներ:

* Ձեր սարքավորումները տեղադրեք որքան կարելի է աննկատ. լիովին օգտագործեք սարքավորումների այնպիսի առավելությունները, ինչպիսիք են ուղղորդված գործողության միկրոֆոնները, ռադիոմիկրոֆոնները, զուգավոր լուսավորության ուժեղացուցիչները, դյուրակիր փոքրիկ խցիկներն ու ձայնագրող սարքերը:

• Եթե դուք գտնում եք, որ ձեր ներկայությունը որոշակիորեն բորբոքում է իրավիճակը, նպաստում վտանգավոր կամ վտանգով հղի անկարգությունների շարունակմանը կամ խորացմանը, ապա քողարկեք խցիկները և միկրոֆոնները՝ անկախ այն բանից, թե ինչ են անում նորություններ հաղորդող մյուս ընկերությունները:

• Լուսավորություն օգտագործեք միայն այն ժամանակ, երբ դա խիստ անհրաժեշտ է ռեպորտաժի կարևոր կողմերը լուսաբանելու համար: Անպատճառ անջատեք լուսավորությունը, եթե տպավորություն է ստեղծվում, թե նա բորբոքում է իրավիճակը, նպաստում վտանգավոր կամ վտանգով հղի անկարգությունների շարունակմանը կամ խորացմանը:

• Աշխատեք որքան կարելի է լուռ, նվազագույնի հասցրեք խոսակցությունները միմյանց հետ:

• Եղեք զուսպ, մեկնաբանություններում ու պահվածքով՝ չեզոք, անկախ անկարգությունների մասնակիցների կողմից հասցված բառացի և (կամ) ֆիզիկական վիրավորանքներից:

* Խուսափեք ռեպորտաժներից այն «առաջնորդների» մասին, ովքեր իրենք են իրենց հռչակել այդպիսին և ովքեր, դատելով ըստ ամենայնի, ներկայացնում են միայն իրենք իրենց, նաև ուզածդ անձի կամ մարդկանց խմբերի մասին ռեպորտաժներից, որոնք բացահայտորեն ուզում են «իրենք իրենց ցույց տալ»:

* Լուսաբանեք անկարգությունները ճիշտ այնպես, ինչպես դրանք տեղի են ունենում, խուսափելով որևէ բեմականացումից. մի դիմեք ոչ մի խնդրանքով կամ առաջարկությամբ, եթե դրանք կարող են որևէ կերպ դրդել մասնակիցներին կամ ինչ-որ բան անել, կամ ձեռնպահ մնալ ինչ-որ գործողություններից:

* Ենթարկվեք ոստիկանության բոլոր ցուցումներին, սակայն անհապաղ զեկուցեք այդ մասին Սի-Էն-Դի-ի պրեզիդենտին կամ ավագ փոխպրեզիդենտին, եթե դրանք, ձեր կարծիքով, նպատակ ունեն կեղծելու նորությունները կամ լռության մատնելու դրանք:

* Հոգ տարեք ձեր ֆիզիկական անվտանգության մասին: Թեև մենք ձգտում ենք թույլ չտալ, որ բռնություն գործադրելու սպառնալիքները խոչընդոտեն իրադարձությունների լուսաբանմանը, ներկայումս կիրառվող քաղաքականությունը Սի-Դի-Էն-ի աշխատակիցների առողջությունը վեր է դասում ռեպորտաժի ծախսողման հնարավորությունից: Ուստի դուք ինքներդ պետք է լավ գնահատեք մարմնական վնասվածք ստանալու հնարավորությունը և ապա որոշեք, թե հետևյալ այլընտրանքներից ո՞րն է առավել տեղին.

- i) շարունակել ռեպորտաժը,
- ii) տեղափոխվել ավելի անվտանգ վայր,
- iii) հեռանալ իրադարձությունների վայրից:

* Անկարգությունների մասին հաղորդեք զուսպ՝ հիմնվելով փաստերի, այլ ոչ թե հույզերի վրա:

Վրդ նպատակով.

1. Անկարգությունների լուսաբանումը ուղիղ եթերում արգելվում է, եթե դա վաղորոք չի ստացել Սի-Դի-Էն-ի պրեզիդենտի կամ ավագ փոխպրեզիդենտի հավանությունը:

2. Մի սկսեք անկարգությունների մասին ռեպորտաժը՝ քանի դեռ ուշադիր և զուսպ չեն գնահատվել իրադրության լրջությունը, վնասի չափը, ինչպես նաև մասնակիցների քանակությունն ու տրամադրությունները:

3. Մի օգտագործեք այնպիսի հրահրող, մոդայիկ բառեր կամ դարձվածքներ, ինչպիսիք են «ոստիկանության գազանություններ», «մոլեգնած ամբոխ», «բռնության պոռթկումներ» և այլն:

4. Անկարգությունները «խռովություն» մի անվանեք, եթե այդ տերմինը չի համապատասխանում անկարգությունների չափին և սաստկությանը:

5. Ասեկոսները (ասենք՝ նշանառուների կրակոցների մասին), «ականատեսների» ցուցմունքներն ու դատողությունները որպես փաստ մի հաղորդեք այնքան ժամանակ, քանի դեռ առանձին-առանձին և հավաստի չի հաստատվել դրանց ճշգրտությունը:

6. Փաստերը պետք է հրամցվեն իրական լույսի ներքո: Եթե, օրինակ, մենք հաղորդում ենք ընդհանուր առմամբ 3000 ուսանող ունեցող ուսանողական քաղաքում 100 ուսանողների ցույցի մասին, ապա լրատվության մեջ պետք է բերվի և՛ մեկ, և՛ մյուս թիվը:

7. Ռեպորտաժի կոնտեքստը ապահովեք մասնակից անձանց վերաբերվող արագ և լիակատար տեղեկությունների, ինչպես նաև անկարգություններին նախորդող կամ դրանց հանգեցրած հարցերի ու հանգամանքների հաշվին:

8. Մասնակիցների կամ նրանց կողմնակիցների հայտարարություններին զուգահեռ տվեք դրանց հակադրվող հայտարարություններ (եթե այդպիսիք կան) այլ հավատարժան աղբյուրներից:

9. Մի հաղորդեք անկարգությունների կամ հնարավոր թեժ կետի ճշգրիտ վայրը, եթե դա բացահայտ ու փաստացի կապ չունի ռեպորտաժի հետ:

Կառավարության սահմանափակումները՝ կապված նորությունների թողարկման հետ (12 դեկտեմբերի 1985 թ.)

Հաշվի առնելով կառավարության սահմանափակումները տևական և կարևոր իրադարձությունների լուսաբանման հարցում՝ Սի-Բի-Էս Նյուս ընկերության պարտականությունն է հաղորդել նորությունները հնարավորին չափ ամբողջական, օբյեկտիվ ու ճշգրիտ՝ չխախտել Սի-Բի-Էս Նյուսի սկզբունքները, քաղաքականության մեջ հետամուտ լինելով հետևյալ հիմնական ուղղություններին.

1. Ինչպես և միշտ, Սի-Բի-Էս Նյուս ընկերությունը հարգալից, բայց և վճռականորեն բողոքելու է ցանկացած կառավարության կողմից նորությունների հաղորդման սահմանափակումների դեմ, ներառյալ ուժի, սպառնալիքների օգտագործումը, ազատ մուտքի կամ հեռարձակման արգելումը կամ գրաքննության այլ ձևերը:

2. Սի-Բի-Էս Նյուսի աշխատակիցները, հանդիպելով ռեպորտաժի ազատության յուրաքանչյուր նմանատիպ սահմանափակման, բարեխղճորեն կենթարկվեն օրենքի պահպանումը ապահովելու կոչված համապատասխան պաշտոնատար անձանց հրամաններին:

3. Սի-Բի-Էս Նյուսի աշխատակիցները իրադարձությունների լուսաբանման թույլատվություն են խնդրելու համաձայն օրենքի: Եթե արգելվում է ռադիոռեպորտաժ վարել կամ հեռուստախցիկներ օգտագործել, ապա թղթակիցները կամ աշխատակիցները պետք է դիմեն իրադարձության վայրում գտնվող ամենաբարձր պաշտոնատար անձին թույլատվություն ստանալու համար: Եթե դրանից հետո էլ թույլտվություն չի ստացվում, ապա այդ միջադեպի մասին հարկ է հնարավորին չափ արագ հաղորդել Սի-Բի-Էս Նյուսի պատասխանատու բյուրոյին: Հարկավոր է Սի-Բի-Էս Նյուսի անձնախմբի համար ստանալ իրադարձությունները լուսաբանելու թույլտվություն՝ առանց խցիկների, օգտագործելով գրանցման ձայնագրությունները և ձայնագրման սարքերը՝ ինչպես դա անում են թերթերի լրագրողները:

4. Թղթակիցը, որը հարկադրված է իրադարձությունների մասին հաղորդել առանց պատկերի ու ձայնի, պետք է գործադրի բոլոր ջանքերը իրադարձության մասին պատմելու՝ օգտագործելով պատկերավոր ռեպորտաժներ դեպքի վայրից, հարցազրույցներ ականատեսների հետ և համանման հնարքներ:

5. Ամեն անգամ, երբ մեզ թույլ չեն տալիս լուսաբանել այն իրադարձությունը, որը, մեր կարծիքով, արժանի է լուսաբանման կամ, երբ նյութը ենթարկվում է գրաքննության, այդ փաստը պետք է տեղ գտնի ցանկացած առաջարկվող սցենարի մեջ: Եթե Սի-Բի-Ես Նյուսի աշխատակիցներին սպառնում է ոստիկանությունը, նրանց բռնում են կամ ձերբակալում, ապա այդ տեղեկությունը ևս պետք է տեղ գտնի ցանկացած առաջադրվող սցենարի մեջ:

6. Լուսաբանման արժանի ցանկացած նյութի բովանդակության համար վերջնական պատասխանատվություն է կրում Սի-Բի-Ես Նյուսի Նյու-Յորքյան ղեկավարությունը, որն էլ որոշում է, թե որ իրադարձությունները պետք է լուսաբանվեն, նաև իրադարձության լուսաբանման նկատմամբ կառավարության սահմափակումներին վերաբերող նյութերի տեղադրման, ռեպորտաժն ավելի տպավորիչ ու հավաստի դարձնող իրադարձությանն առնչվող լրացուցիչ նյութերի և Սիացյալ Նահանգներում առկա պարզաբանող նյութերի օգտագործման հետ կապված հարցերը:

Ռեպորտաժներ ահաբեկիչների մասին (7 ապրիլի 1977թ.)

Քանի որ փաստերն ու հանգամանքներն ամեն առանձին դեպքում միանման չեն՝ չկան նաև մոտեցման կոնկրետ, մեքենայորեն կիրառվող կանոններ ահաբեկիչներին ու պատանդներին վերաբերող ռեպորտաժների համար: Սի-Բի-Ես Նյուսն առաջիկայում ևս օգտվելու է նորությունների մատուցման սովորական չափանիշներից, և եթե, ինչպես հաճախ է պատահում, նման իրադարձություններն արժանի են լուսաբանման, ապա մենք պիտի շարունակենք հաղորդել դրանց մասին՝ չնայած դրանց «վնասակար ազդեցության» վտանգին: Ահա նման իրադարձությունները լռության մատնելու թերություններից մի քանիսը.

1. Անցանկալի շեշտադրումները, որոնք ազդում են մեր նկատմամբ ունեցած վստահության վրա («Էլ ուրիշ ի՞նչ են ռեպորտյորները թաքցնում մեզանից»):

2. Սենսացիոն և սխալ լուրերի տարածման առիթը:

3. Մեր ոչ ճիշտ մոտեցումը նորությունների հաղորդմանը՝ որպես կողմնակի նպատակների բավարարման միջոց:

Եվ այնուամենայնիվ, նման ռեպորտաժները պետք է լինեն կշռադատված, բարեխիղճ ու զուսպ: Ակնհայտ է, որ հարկ չկա նման իրադարձությունը դարձնել ավելի սենսացիոն, քան իրականում է: Մենք պետք է հատուկ զգուշություն դրսևորենք մեր մոտեցմանը հանդեպ ահաբեկիչը կամ առևանգողը:

Ստորև տրված են ավելի կոնկրետ հանձնարարականներ.

1. Լուսաբանվող իրադարձության անբաժանելի բաղկացուցիչն են հանդիսանում ահաբեկչի (առևանգողի) պահանջները, և մենք պետք է հայտնենք այդ պահանջները: Սակայն մենք չպետք է ահաբեկչին (առևանգողին) չափից դուրս հնարավորություն տանք արտահայտելու իր պահանջները: Այսպես՝ եթե այդ պահանջները շարադրվում են ոչ սեղմ ձևով և զերծ չեն ճամարտակությունից ու քարոզչությունից, ապա, թերևս, ավելի լավ կլիներ վերաձևակերպել դրանք, այլ ոչ թե հաղորդել անմիջականորեն ահաբեկչի ձայնով կամ հեռարձակել նրան հեռուստատեսությամբ:

2. Կարիք չկա ահաբեկչի մասին ռեպորտաժներ տալ ուղիղ եթերում, քանի որ կարող ենք հայտնվել թակարդում և չվերահսկվող հնարավորություն տալ նրան արտահայտելու իր պահանջները: Բացառություն չեն կազմում ամենաստիպողական պայմանները, և այդ պարագայում անհրաժեշտ է ստանալ Սի-Բի-Էս Նյուսի Պրեզիդենտի հավանությունը, իսկ Պրեզիդենտի բացակայության դեպքում՝ Սի-Բի-Էս Նյուսի ավագ փոխարեզիդենտի համաձայնությունը: (Սա չի արգելում Սի-Բի-Էս Նյուսի թղթակիցների ուղղակի ռեպորտաժները իրադարձության վայրից, սակայն հարկավոր է զգուշություն դրսևորել՝ զսպվածությունն ու կոնտեքստը ապահովելու համար):

3. Սի-Բի-Էս ընկերության աշխատակիցները չպետք է մոռանան, որ ահաբեկչի հետ աշխատող իշխանությունները կարող են հեռախոսով զանգահարելու կարիք ունենալ, ուստի պիտի ջանան, երբ դա հնարավոր է, պարզել՝ այդ կապի գծերի օգտագործումը չի՞ կարող արդյոք խանգարել իշխանություններին օգտվել կապի միջոցներից:

4. Սի-Բի-Էս Նյուսի պատասխանատու ներկայացուցիչները պետք է ջանք թափեն կապվելու պատանդների հետ կապված իրադրություններով զբաղվող փորձագետների հետ, պարզելու համար, թե ունե՞ն արդյոք նրանք այս կամ այն հանձնարարականը հետևյալ հարցերում. ի՞նչ խոսքերից պետք է խուսափել, ո՞ր հարցերը կամ հաղորդագրությունները կարող են բարդացնել իրավիճակը և այլն: Դեպքի վայրում իշխանության յուրաքանչյուր այդպիսի հանձնարարական պետք է ուշադրությամբ քննարկվի, և Սի-Բի-Էս Նյուսի աշխատակիցները դրանք պետք է դիտեն որպես գործողությունների ծրագիր (սակայն ոչ որպես կարգադրություն):

5. Տեղական իշխանություններին հարկավոր է հայտնել Սի-Բի-Էս-ի այն աշխատակիցների անունները, որոնց հետ նրանք կարող են կապվել, եթե ունենան նոր հանձնարարականներ կամ ցանկություն ունենան զբաղվելու այնպիսի նրբաբնույթ հարցերով, ինչպիսիք են ռեպորտյորի հեռախոսազանգը ահաբեկչին, կամ եթե ծագեն այլ խնդիրներ, որոնք կարող են խանգարել իշխանությունների ու ահաբեկիչների հարաբերությանը:

6. Այստեղ տեղին են նաև հանձնարարականները՝ կապված մեր կողմից քաղաքացիական անկարգությունների լուսաբանման հետ: Առանձնապես սա վերաբերում է այնպիսի հանձնարարականներին, որպիսիք են հրահրող մոդայիկ բառերի կամ դարձվածքների օգտագործման, ասեկոսների տարածման արգելումը և այլն: Ինչպես քաղաքացիական անկարգություններին վերաբերվող հաղորդումների պարագայում, պատանդների մասին պատմող ռեպորտաժի ժամանակ ևս, թղթակիցները պետք է ենթարկվեն ուստիկանության բոլոր կարգադրություններին: Սակայն բոլոր նման կարգադրությունների մասին, որոնք նպատակ են հետապնդում կեղծել կամ կոծկել նորությունները, նրանք անհապաղ պետք է զեկուցեն իրենց ղեկավարությանը:

Խմբագրում և մոնտաժ

Խմբագրման և մոնտաժման նպատակն է ստանալ պարզ ու հակիրճ մի շարադրանք, որն անաչառորեն, ազնվորեն ու առանց աղավաղումների կարտացոլի այն, ինչը տեսել ու լսել են մեր թղթակիցները, խցիկներն ու միկրոֆոնները: Այդ նպատակին հասնելու համար պահանջվում է կատարվող յուրաքանչյուր իրադրության ուշադիր վերլուծություն՝ առանձին փաստերի հետ շաղկապված: Ստորև բերվող հիմնական չափանիշները, որոնք մշակվել են շատ տարիների ընթացքում, պիտի օգնեն ձեզ նման մոտեցումներ մշակելիս:

1. Եթե հաղորդման մեջ հարցազրույցի ընթացքում հարցի պատասխանը մասամբ կամ լրիվ բխում է այլ հարցերին տրված պատասխաններից, ապա դա պետք է արտացոլել հաղորդման մեջ. կա՛ն նյութի շարադրման ներածականում, կա՛ն կադրում՝ մոնտաժային անցման համար, կա՛ն ձայնով՝ համապատասխան բացատրությունների օգնությամբ:

2. Եթե վավերագրական հաղորդման մեջ կան ճառի կամ հայտարարության մեկից ավելի հատվածներ, ապա դրանց հայտնվելու հերթականությունը հաղորդման մեջ պետք է համապատասխանի ճառի կամ հայտարարության մեջ նրանց հերթականությանը, եթե միայն հաղորդման մեջ վերապահում չի արվում հակառակի մասին:

3. Այն չափանիշները, որոնք ընդգրկում են լսարանի արձագանքը անցուդարձին ցուցադրող կադրերի կամ հակառակ կողմից կատարված նկարահանումների օգտագործումը, դիտարկվում են էջում, «Հարցազրույց» բաժնում: Տվյալ չափանիշները նույն ուժով են գործում ինչպես մոնտաժային սենյակում, այնպես էլ հարցազրույցի անցկացման վայրում:

Սուբյեկտիվ տեսակետի արտահայտում

Որոշ բացառություններ չհաշված՝ նորությունների հաղորդման ընթացքում կամ հասարակական-քաղաքական հարաբերություններին նվիրված ծրագրերում Սի-Բի-Էս-ի աշխատակիցներին արգելվում է հայտնել սեփական սուբյեկտիվ տեսակետը: Ահա վերոհիշյալ բացառությունները.

(i) նորությունների տեսության հաղորդումները տարեվերջին (կամ մեկ այլ ժամանակ), կամ անհատական հարցազրույցները նորությունների հաղորդումից հետո, որոնց ընթացքում թղթակիցներն արտահայտում են իրենց անձնական տեսակետը, իրենց կարծիքը հայտնում իրադարձությունների զարգացման վերաբերյալ. այդպիսի փաստի մասին անհրաժեշտ է հայտնել աներկբայորեն, ինչպես և այն մասին, որ այդ կարծիքները թղթակիցների տեսակետերն են,

(ii) հաղորդումները, որոնցում քննադատություն է պարունակվում արվեստի ասպարեզում,

(iii) մարզական հաղորդումները, երբ թղթակիցները սուբյեկտիվ կարծիքներ են հաղորդում իրենց մասնագիտության ու գիտելիքների շրջանակներում:

Լրտեսում էլեկտրոնային միջոցների օգնությամբ

Ընդհանուր դրույթներ.

Օրենսդրությունը, որով կարգավորվում է էլեկտրոնային լրտեսման սարքերի օգտագործումը, ներառյալ թաքցված խցիկների օգտագործումը, բարդ է: Այստեղ անհրաժեշտ է դիտարկել Օրենքը ֆեդերալ կապի մասին, կապի գծով ֆեդերալ հանձնաժողովի կանոններն ու հիմնադրույթները, ֆեդերալ օրենսդրական փաստաթղթերը քրեական իրավունքի վերաբերյալ, ինչպես նաև անձնական կյանքին չմիջամտելու մասին քրեական իրավունքի նահանգային օրենսդրական փաստաթղթերն ու օրենքները (որոնք կարող են նույնը չլինել տարբեր նահանգներում): Գործող օրենսդրությունը քննարկելիս, որը հետևում է ստորև, հիշատակվելու են իրավունքներ, երբ լրտեսումը էլեկտրոնային միջոցների օգնությամբ օրինական է, իրավիճակներ, երբ այդօրինակ լրտեսումը օրինական չէ, և իրավիճակներ, երբ լրտեսումը էլեկտրոնային միջոցների օգտագործմամբ կարող է դիտվել ինչպես օրինական, այնպես էլ ոչ օրինական՝ կախված փաստացի հանգամանքներից: Սի-Էն-Դի-ի աշխատակիցները չեն կարող զբաղվել էլեկտրոնային լրտեսմամբ, ինչպես նշվում է ստորև, եթե այդ լրտեսումն անօրինական է: Այն դեպքերում, երբ կա որևէ անորոշություն առաջարկվող գործողության վերաբերյալ, հարկավոր է ստանալ Սի-Էն-Դի-ի Պրեզիդենտի կամ Պրեզիդենտի նշանակած անձի նախնական համաձայնությունը, ընդ որում, վերջինս, իր հերթին, պետք է խորհրդակցի իրավաբանական բաժնի հետ:

1. Թաքցված խցիկներ

ա) *Հասարակական և կիսահասարակական վայրերում* թաքցված խցիկների օգտագործումը թույլատրվում է: Այդպիսով, նման խցիկներ կարելի է օգտագործել փողոցներում, հասարակական զբոսայգիներում կամ հասարակական շենքերում կատարվող գործողություններն ու իրադարձությունները գաղտնի նկարահանելու կամ գրանցելու համար: Ռեստորանները, թատրոնները և խանութները հանդիսանում են կիսահասարակական վայրեր և ուստի այդտեղ ևս կարելի է օգտագործել թաքցված խցիկներ: Բայց և այնպես, գոյություն ունեն որոշ սահմանափակումներ: Թաքցված խցիկները հարկ է օգտագործել միայն այնպիսի իրադարձությունների նկարահանման համար, որպիսիք հաճույքով պիտի դիտեն այլ անձինք հասարակական կամ կիսահասարակական վայրում: Բացի այդ, որոշ դեպքերում պարտադիր չէ, որ մարդիկ հասարակական կամ կիսահասարակական վայրերում համաձայնեն իրենց նկարահանել: Օրինակ, թեպետ կինոթատրոնը կիսահասարակական վայր է (և դուք կարող եք նկարահանել ճեմասրահ մտնող կամ այդտեղից ելնող մարդկանց), այնուհանդերձ, կարող են դժվարություններ ծագել, եթե հատուկ խցիկներով նկարահանվի որևէ հանդիսատեսի արձագանքը այնպիսի մի ֆիլմին, ինչպիսին է «Սատանա հալածողը», քանի որ կինոթատրոնի մութ դահլիճում նստածը անտեղյակ է, թե իրեն կարող են նկարահանել:

բ) Որոշ սահմանափակ պարագաներում թաքցված խցիկները կարող են օգտագործվել *մասնավոր վայրերում* կատարվող իրադարձությունների նկարահանման համար: Այսպես, օրինակ, միանգամայն տեղին է հյուրանոցի

համարում, Սի-Բի-Էս-ի աշխատակցի տանը կամ գրասենյակում կատարվող իրադարձությունների նկարահանումը: Սակայն չի կարելի առանց թույլտվության գաղտնի նկարահանել չկասկածող անձնարավորությանը տանը, գրասենյակում կամ հյուրանոցի համարում կամ այլ վայրերում, ուր նա օգտվում է անձնական գործերին չմիջամտելու իրավունքից: Քանի որ սա օրենքի առանձնապես բարդ տեսանկյուն է, նախքան մասնավոր վայրերում թաքցված խցիկների օգտագործումը հարկ է խորհրդակցել իրավաբանական բաժնում:

գ) Այն դեպքում, երբ չկա բացարձակ հանդվածություն այն մասին՝ արդյոք տվյալ վայրը հասարակական է, թե կիսահասարակական, հարկավոր է ելակետ ընտրել այն ենթադրությունը, որ տվյալ վայրը մասնավոր է, քանի դեռ իրավաբանական բաժինը չի հայտնել, որ տվյալ վայրը այդպիսին չէ:

2. Հեռախոսային խոսակցությունների ձայնագրում ռադիոսարքերի միջոցով

Եթե հեռախոսային խոսակցության ձայնագրման համար օգտագործվում է ռադիոսարք (օրինակ, հեռախոսափողի մեջ տեղավորվում է ռադիոմիկրոֆոն), ապա Ֆեդերալ օրենսդրությունը պարտավորեցնում է այդ առթիվ ստանալ խոսակցության բոլոր մասնակիցների համաձայնությունը: Նման համաձայնության բացակայության պարագայում խոսակցությունը չի կարող ձայնագրվել:

3. Հեռախոսային խոսակցությունների ձայնագրում ոչ ռադիոսարքերի միջոցով և առանց հեռարձակման մտադրության

Ֆեդերալ օրենքը միանշանակ է: Սակայն տարբեր նահանգների օրենքները խիստ տարբեր են իրարից: Հետևաբար, նման ձայնագրություն չի կարելի կատարել առանց Սի-Դի-Էս-ի Պրեզիդենտի (կամ Պրեզիդենտի նշանակված անձնավորության) նախնական հավանության, իսկ վերջիններս էլ խորհրդակցում են իրավաբանական բաժնի հետ: Ստորև համառոտակի բերվում են կիրառվող օրենսդրության պահանջները.

ա). Համաձայն Ֆեդերալ օրենսդրության՝ նման ձայնագրության համար պահանջվում է խոսակցության մասնակիցներից մեկի համաձայնությունը, և այդ մասնակիցը կարող է լինել Սի-Բի-Էս-ի աշխատակիցը:

բ). Սակայն մի շարք նահանգներում նման ձայնագրության համար պահանջվում է բոլոր մասնակիցների համաձայնությունը: Այլ նահանգներում ինֆորմացիայի օգտագործման կամ հրատարակման համար, անգամ եթե ինֆորմացիան ձեռք է բերվել օրինական ճանապարհով, պահանջվում է բոլոր մասնակիցների համաձայնությունը:

գ). Հեռախոսային ընկերությունների սակացուցակի համաձայն՝ ձայնագրելու ժամանակ որոշ հանգամանքներում կարող է պահանջվել հնչյունա-տոնային ազդանշանի օգտագործում:

4. Հեռախոսային խոսակցությունների ձայնագրում հեռարձակման նպատակով

Ֆեդերալ օրենսդրության համաձայն, եթե հեռախոսային խոսակցությունը ձայնագրվում է հետագա հեռարձակման համար կամ տրվում է եթեր անմիջապես, անհրաժեշտ է ձայնագրությունից առաջ ստանալ խոսակցության բոլոր մասնակիցների աներկիմաստ համաձայնությունը, անկախ այն բանից, ձայնագրումը կատարվում է ռադիոսարքով, թե՛ այլ սարքերով:

5. Ռադիոսարքերի միջոցով բանավոր խոսակցությունների ձայնագրում կամ ունկնդրում (ուղղակի կամ անուղղակի)

ա) Ֆեդերալ օրենսդրության պահանջներին համապատասխան՝ չի արգելվում ռադիոսարքերի (օրինակ՝ ռադիոմիկրոֆոնների) օգտագործումը հասարակական կամ կիսահասարակական վայրերում խոսակցություններ ձայնագրելու կամ լսելու համար, և մասնակիցների համաձայնությունը չի պահանջվում, եթե այն անձինք, ում խոսակցությունը ձայնագրում են կամ ունկնդրում, գտնվում են Սի-Բի-Էս-ի աշխատակցի լսողության սահմաններում: Փողոցները, ռեստորանները, զբոսայգիները, մարզական ասպարեզները և թատրոնները հանդիսանում են հասարակական կամ կիսահասարակական վայրերի օրինակներ: Այսպես՝ ֆեդերալ օրենքին համապատասխան՝ եթե Սի-Բի-Էս-ի աշխատակիցը խոսակցության մասնակից է հասարակական կամ կիսահասարակական վայրում, ապա մյուս խոսակցի համաձայնությունը չի պահանջվում, և եթե Սի-Բի-Էս-ի աշխատակիցը խոսակցության մասնակից չէ, սակայն գտնվում է դրա լսելիության սահմաններում, ապա խոսակցության և ոչ մի մասնակցի համաձայնությունը չի պահանջվում: Սակայն մի շարք նահանգների (բացառությամբ Նյու Յորքի, Կալիֆորնիայի, Միսսուրիի կամ Կոլումբիայի ֆեդերալ օկրուգի) օրենսդրությունը պահանջում է գաղտնի գրվող խոսակցության բոլոր մասնակիցների նախնական համաձայնությունը: Յետևաբար, նույնիսկ ֆեդերալ օրենսդրության պահպանման դեպքում, չի կարելի (վերը նշված բացառությամբ) իրականացնել այդ ալիքակալումը, առանց Սի-Էն-Դի-ի Պրեզիդենտի (Պրեզիդենտի նշանակված անձի) նախնական հավանության վերջիններս էլ խորհրդակցում են իրավաբանական բաժնի հետ:

բ) Ըստ ֆեդերալ օրենսդրության (ինչպես նաև մի շարք նահանգների օրենսդրության), եթե, խոսակցության գաղտնի ձայնագրման կամ ունկնդրման նպատակով, մասնավոր վայրում օգտագործվում է ռադիոսարք, ապա դրա համար հարկավոր է ստանալ այդ խոսակցության բոլոր մասնակիցների նախնական համաձայնությունը: Այսպես՝ ռադիոսարքի միջոցով Սի-Բի-Էս-ի աշխատակցի և նրա զրուցակցի միջև վերջինիս տանն ընթացող խոսակցության ալիքակալման համար պահանջվում է զրուցակցի նախնական համաձայնությունը: Նույն կերպ, ավտոմեքենայում, հյուրանոցի համարում կամ գրասենյակում ընթացող խոսակցությունը ռադիոսարքի միջոցով ալիքակալելը պահանջում է այդ խոսակցության բոլոր մասնակիցների համաձայնությունը:

գ) Այն դեպքում, երբ պարզ չէ, թե տվյալ վայրը հասարակական է թե կիսահասարակական, հարկ է ելակետ ունենալ այն ենթադրությունը, որ տվյալ վայրը մասնավոր է, եթե միայն իրավաբանական բաժինը չի հայտնում, որ տվյալ վայրն այդպիսին չէ:

6. Բանավոր խոսակցությունների ձայնագրում կամ ունկնդրում ոչ ռադիոսարքերի միջոցով

ա) Ռադիոսարքեր չհանդիսացող սարքավորումների (օրինակ՝ պայուսակի մեջ պահված փոքրիկ մագնիսոտՖոնի) օգտագործումը հասարակական կամ կիսահասարակական վայրերում վարվող խոսակցությունները գաղտնի որսալու նպատակով, ենթարկվում է նույն այն օրենքներին ու վարվելակարգին, որոնք համառոտակի բերվել են 5-ա կետում:

բ) Ֆեդերալ օրենսդրությունը թույլատրում է ռադիոսարք չհանդիսացող սարքավորման միջոցով մասնավոր վայրում վարվող խոսակցության որսումը, եթե այդ մասին կա խոսակիցներից մեկի համաձայնությունը (կամ, եթե ձայնագրող անձնավորությունը խոսակցության մասնակիցներից մեկն է): Սակայն որոշ նահանգներ պահանջում են բոլոր մասնակիցների համաձայնությունը: Մի շարք նահանգներում էլ որսված խոսակցության բովանդակության հրապարակումը, նույնիսկ եթե չի խախտվել օրենքը որսման մասին, պահանջում է այդ խոսակցության բոլոր մասնակիցների համաձայնությունը: Յետևաբար, նման որսումը չի կարելի իրականացնել առանց Սի-Էն-Դի-ի Պրեզիդենտի (կամ Պրեզիդենտի նշանակած անձի) նախնական հավանության, իսկ վերջիններս էլ խորհրդակցում են իրավաբանական բաժնի հետ:

գ) Այն դեպքում, երբ պարզ չէ, թե տվյալ վայրը հասարակական է թե կիսահասարակական, հարկ է ելակետ ունենալ այն ենթադրությունը, որ տվյալ վայրը մասնավոր է, եթե միայն իրավաբանական բաժինը չի հայտնում, որ տվյալ վայրն այդպիսին չէ:

Հավասարաչափ ժամանակ

- 1935 թվականին ընդունված կապի մասին օրենքի 315 բաժնին համապատասխան՝ եթե պետական պաշտոնավարման որևէ թեկնածուի, որն այդ պաշտոնին է առաջադրվել օրինական հիմունքներով, տրամադրվում է անվճար ժամանակ, ապա նույն պաշտոնին օրինական հիմունքներով առաջադրված ցանկացած այլ թեկնածուի ևս պիտի տրամադրվի նույն ժամանակը, որոշ բացառություններով¹:

- Այս և մյուս պահանջների պահպանումը դյուրացնելու համար Սի-Բի-Էս-ի իրաբանական բաժինը նախապատրաստում և ըստ անհրաժեշտության վերանայում ու լրացնում է «Քաղաքական հաղորդումների ասպարեզում քաղաքականության մասին հայտարարությունը»: Այդ հայտարարությունը, որը ներառում է 315 բաժնի մանրամասն վերլուծությունը, լայնորեն տարածվում է Սի-Բի-Էս-ի բոլոր աշխատակիցների մեջ՝ ղեկավարության և կատարողների մակարդակով, որոնք պատասխանատու են այդ ասպարեզում կայացվող խմբագրական որոշումների համար: Սի-Բի-Էս-ի իրավաբանական բաժինը հաճույքով կպատասխանի բոլոր ծագող հարցերին: Սի-Էն-Դի-ի վարչական բաժնի փոխպրեզիդենտը պատրաստվում է հանդես գալ որպես կապող օղակ իրավաբանական բաժնի հետ:

- Սի-Բի-Էս-ը գտնում է, որ 315 բաժինը անհիմն խիստ սահմանափակումներ է նախատեսում զանգվածային հաղորդման միջոցների կողմից քաղաքական միջոցառումների լայն լուսաբանման հարցում: Այդ

¹ Կա մի բացառություն: Կապի ֆեդերալ հանձնաժողովի կանոնների համապատասխան աներկիմաստ համաձայնությունը պարտադիր չէ, եթե խոսակցության մյուս մասնակիցը հեռախոսագանգում է մի հաղորդման կապակցությամբ, որով սովորաբար հեռաթմակվում են հեռախոսային խոսակցություններ:

պատճառով տարիների ընթացքում ընկերությունը ձեռնարկել է ջանքեր 315 բաժինը չեղյալ հայտարարելու համար: Այդ ջանքերը 1960 թվականին հանգեցրին բաժնի գործողության ժամանակավոր կասեցման, որն, իր հերթին, հնարավոր դարձրեց Նիքսոնի և Քենեդիի բանավեճի պատմական հեռարձակումը: Դրանք նաև հանգեցրին 315 բաժնի փոփոխությանը, որով չեղյալ համարվեց նորությունների նշված հաղորդումներում նույնաչափ ժամանակ տրամադրելու պահանջները²:

- Հավասարաչափ ժամանակ տրամադրելու պահանջը տարածվում է միայն քաղաքական թեկնածուների ելույթների վրա: Այդ պահանջը չի գործում անկողննապահության ռազմավարությանն ի հակակշիռ, համաձայն որի չկա առանձին անձանց, կազմակերպությունների կամ վիճելի հարցերի քննարկման համար հավասարաչափ ժամանակ տրամադրելու պարտավորություն: Այս տարբերակումը հաճախ ոչ ճիշտ է հասկացվում:

Անկողննապահության ռազմավարություն³

- Կապի գծով ֆեդերալ հանձնաժողովի պահանջներին համապատասխան՝ «պետական կարևորության վիճելի հարցերի շուրջ հակադիր հայացքները» հեռարձակելու համար, պետք է տրամադրվեն «բավականաչափ հնարավորություններ»:

- Ինչպես վկայում է պատմությունը, անկողննապահության ռազմավարությունը միշտ էլ Սի-Էն-Դի-ի հաղորդումները պայմանավորող քաղաքականության անկյունաքարն է եղել: Պրն. Փեյլին 1954 թվականի մայիսի 25-ին արտասանած «Ճանապարհ դեպի պատասխանատվություն» ճառում, որտեղ շոշափվում էին «խոսնակի դերն ու պատասխանատվությունը նորությունների և հասարակական-քաղաքական հարաբերությունների ոլորտում», ինչպես նաև այն հիմնական կանոնները, որոնք տարիների ընթացքում մշակել է Սի-Բի-Էս-ը, և որոնք կարգավորում են նրա «կենսականորեն կարևոր գործառույթների կատարումը» այդ ոլորտում, հայտարարել է.

«Ինչպես ակնհայտ դարձավ, անկողննապահության և հավասարակշռվածության ռազմավարությունը հանդիսանում է մեր քաղաքականության անկյունաքարը նորությունների և հասարակական-քաղաքական հարաբերությունների ոլորտում, ինչպես որ դա պետք է լինի ամեն մի խոսնակի համար: Սակայն ես ուզում եմ նշել, որ այդ սկզբունքը չի կարելի հանգեզնել մաթեմատիկական բանաձևի կամ նույնիսկ խստիվ օրենքների հավաքածուի. օրենքներ, որոնք կատարվում են ինքնրստիմության և ընդգրկում են ամենատարբեր հնարավոր հանգամանքներ: Ամերիկյան հաղորդումների

² 315 բաժինը չի տարածվում քաղաքական թեկնածուների ելույթների վրա.

(i) «բարեխիղճ պատրաստված նորությունների հաղորդումներում»,
(ii) «ինչ-ինչ իրադարձությունների կապակցությամբ բարեխիղճ հարցազրույցներում»,
(iii) «նորությունները բարեխիղճ վավերականորեն հաղորդելիս (եթե թեկնածուի ելույթը ուղղակիորեն կապված չէ այդպիսի վավերական հաղորդման մեջ լուսաբանվող սյուժեի կամ սյուժեների հետ)»
(iv) «իրադարձությունների վայրից բարեխիղճ նորությունների հաղորդումներում (ներառելով, սակայն չսահմանափակվելով քաղաքական համագումարներով կամ դրանց հետ կապված գործունեությամբ)»:

³ Սի-Բի-Էս-ը ուրիշ շատ ընկերությունների հետ կոչ է անում չեղյալ հայտարարել անկողննապահության ռազմավարությունը այն պատճառով, որ կառավարությունն օրինականորեն չի կարող ստուգել ռադիոյի և հեռուստատեսության ներկայացուցիչների աշխատանքը:

ագատ համակարգում անկողնապահությունն ու հավասարակշռվածությունը պետք է ձեռք բերվեն կայանի կամ զանգի դեկավարության կողմից անաչառ ու համարձակ որոշումների կայացման ճանապարհով:»

- Սի-էն-Դի-ն անկողնապահության է ձգտում, որոշակի ժամանակահատվածի ընթացքում բավականաչափ հնարավորություններ ընձեռնելով պետական կարևորության վիճելի հարցերի շուրջ կարևոր կարծիքների արտահայտման համար, որոնք պետք է հեռարձակվեն իր հաղորդումներում⁴: Այդ նպատակին հասնելը հանդիսանում է և այսուհետև ևս պիտի հանդիսանա Սի-էն-Դի-ի բոլոր աշխատակիցների մշտական խնդիրը: Գանգատները, թե չի հաջողվում հասնել անկողնապահության, Սի-էն-Դի-ի դեկավարությունը անհապաղ հանձնում է Սի-Բի-Էս-ի իրավաբանական բաժին՝ ուշադիր և արագ ուսումնասիրման համար: Այդ ուսումնասիրության թելադրած ցանկացած գործողություն ձեռնարկվում է անմիջապես:

Նորությունների հավաքման և տարածման ազատություն՝ արդար դատ

Երբ մենք նորություններ ենք հաղորդում հանցագործությունների, քրեական հանցանքի մեջ կասկածվող անձանց ??? համապատասխան դատաքնությունների մասին, չափազանց կարևոր է, որ մենք անկողնապահ ու խոհեմ հարաբերակցություն պահպանենք հասարակության իրազեկման պահանջմունքի և դատավարության ընթացքի վրա այն ներգործության միջև, ինչը մենք ենք ցուցաբերում մեր հաղորդմամբ, և ինչը կարող է անբարենպաստ լինել: Ջսպվածության ներքոհիշյալ չափանիշները մշակվել են այն նպատակով, որպեսզի օգնեն մեզ ճիշտ գործել:

«Գոյություն ունեն որոշակի հանգամանքներ, երբ այն, ինչ հաղորդվում է հանցագործության մասին, կարող է անչափ լուրջ անճշտության հանգեցնել արդարությունը պարզելիս: Օրինակ, եթե մինչև դատավարության սկսվելը, մանրամասն հաղորդեք ամբաստանյալի խոստովանությունները կամ նրա անցյալից մանրակրիտ տեղեկություններ հրատարակեք, որոնք կան ոստիկանության տրամադրության տակ, և կամ «վկայություններ» (հարցազրույցներ նրանց հետ, ովքեր պնդում են, որ իբր տեսել են այն իրերը կամ իբր ճանաչում են այն իրերը, որոնք հաստատում են ամբաստանյալի մեղքը), ապա իբրև արդյունք կարող է այնպես ստացվել, որ դատարանը ասի:

◆ *ամբաստանյալի գործով դատավարությունը չի կարող անցկացվել օրենքին համապատասխան: Դա բացատրվում է նրանով, որ երկվյալ ատենակալները իրավագիտության մեր անգլոսաքսոնյան համակարգին համապատասխան՝ պետք է դատավճիռը կայացնեն միայն դատարանում իրենց լսած ցուցմունքների հիման վրա: Այն ցուցմունքները, որոնք երկվյալ ատենակալները կարդացել են, տեսել կամ լսել դատարանից դուրս, նրանց վրա ոչ մի ազդեցություն չպետք է գործեն, հակառակ դեպքում ամբաստանյալը կարող է զրկված լինել արդար դատվելու հնարավորությունից:* Սովորաբար չի

⁴ Անկողնապահության սկզբունքը չի պահանջում, որ ամեն հաղորդման մեջ ներկայացված լինեն վիճելի հարցին վերաբերող հակադիր հայացքներ. միայն արտոնագիր ստացած անձն է, որ ընդհանուր ծրագիրը կազմելիս կարող է բավականաչափ հնարավորություն ընձեռնել հակադիր տեսակետները շարադրելու համար:

թույլատրվում, որ ոստիկանության ունեցած տեղեկություններն ամբաստանյալի անցյալի մասին ներկայացվեն դատարանում որպես ապացույցներ՝ իհարկե, բացառությամբ այն դեպքերի, երբ դա պնդում է ինքը՝ ամբաստանյալը: Մենք գիտենք նաև, որ Գերագույն Դատարանի վերջին տարիներում ընդունած որոշումների համապատասխան, շատ ցուցումունքներ չեն ընդունվում որպես ապացույց, քանի որ տրվել են ոչ կամավոր կամ այն պատճառով, որ ոստիկանությունն ամբաստանյալին չափից դուրս երկար է ձերբակալված պահել՝ առանց մեղադրանք ներկայացնելու և առանց փաստաբանի: Յետևաբար, եթե մենք մանրամասն հաղորդում ենք ամբաստանյալի ցուցումունքների մասին կամ տեղեկություններ նրա անցյալից, որոնք ունի ոստիկանությունը, ապա կարող ենք հնարավոր երդվյալ ատենակալներին տրամադրել վկայություններ, որոնք սաստիկ վարկաբեկում են ամբաստանյալին, թեև վերջին հաշվով նման վկայությունները երբեք էլ չեն ներկայացվի երդվյալ ատենակալներին և, քաղաքացիական ազատությունների պահպանման հիման վրա, չեն կարող ներկայացվել նրանց դատին:

Իբրև արդյունք՝ մենք կարող ենք ստանալ այն, ինչը, որպես քաղաքացի, պարզապես չէինք ցանկանա. այսինքն՝ հավանական մեղավոր ամբաստանյալը մեր պատճառով կարող է ազատ արձակվել առանց պատիժ կրելու, քանի որ նա չի կարող դատվել ըստ օրենքի: Նման սահմանափակումները (ի բացառյալ սույն չափանիշի այս գլխում բերվող դեպքերը)՝ կապված ամբաստանյալի ցուցումունքների և նրա անցյալի մասին ոստիկանության ունեցած տեղեկությունների կամ էլ ամբաստանյալի կամ հավանական դատապարտյալի մեղավորության կամ անմեղության վկայությունների հաղորդման հետ, չեն տարածվում այն դեպքերի վրա, երբ այդօրինակ հաղորդումներն անդրադառնում են պետական քաղաքականությանը, և խոսքը, միայն մեր հեռուստադիտողների և ունկնդիրների հետաքրքրությանը հետևելով, մեր ունեցած ինֆորմացիայի պարզ հաղորդման մասին չէ լուկ:

Մենք այսուհետև ևս կոչված ենք կատարել հեռուստատեսության և ռադիոյի առաքելության մեր մասը՝ կանգնած լինենք շահերի պաշտպանության դիրքերում՝ հատկապես այն շահերի, որոնք վերաբերում են արդարադատության իրականացմանը: Յետևաբար, այն դեպքերում, երբ առկա են պետական քաղաքականությամբ թելադրված հիմքեր, մենք կարող ենք աշխատել ուզած կարևորագույն հաղորդման վրա և եթե տալ այն, եթե անմիջականորեն կապված է լուսաբանման արժանի սյուժեի հետ, կամ բացահայտում է արդարադատության իրականացման հետ կապված հարցեր, մերկացնում է դատական սխալները կամ ոչ ճիշտ գործողությունները կամ պաշտոնատար անձանց թերացումները: Ութերգեյթը, անշուշտ, դրա ամենաակնառու օրինակն էր: Վեթումկայի (Wetumpka) դեպքն այդքան ակնառու և դրամատիկ չէ. շրջանային շերիֆը մի երիտասարդ նեգրի դուրս է քաշում նրա մեքենայից և բանտ նստեցնում, իսկ հետո այդ նեգրին գտնում են բանտում մահացած և շրջանի պաշտոնատարներին ոչ մի մեղադրանք չի ներկայացվում: Մի որոշ ժամանակ անց, երբ ակնհայտ դարձավ, որ ոչ մի պաշտոնական հետաքննություն չի լինելու այդ առթիվ, մենք հաղորդեցինք ականատեսների և այլոց վկայություններն այն մասին, որ այդ նեգրը զազանաբար ծեծի է ենթարկվել շերիֆի կողմից: Տվյալ դեպքում, ակնհայտորեն, խոսքն այն մասին էր, որ վկայությունները որոշում էին շերիֆների մեղավորությունն ու անմեղությունը: Սակայն պարզ էր, որ ոչ ոք չէր պատրաստվում որևէ բան անել, ուստի միանշանակ տպավորությունն էր

ստեղծվում, որ թույլ է տրվում արդարադատության ոչ ճիշտ իրականացում: Այդպիսի դեպքերում թույլատրելի են միայն զգուշավոր ու պատասխանատու ռեպորտաժներ, և մենք լրիվ թափով առաջ գնացինք: Այսպիսով, եթե մեր մեջ տպավորություն է ստեղծվում, որ ակնհայտորեն անմեղ մարդուն ուզում են բանտ գցել, մենք կարող ենք և պետք է հաղորդենք ամեն վկայություն, որ հաջողել ենք հայտնաբերել:

Մյուս կողմից, այն դեպքում, երբ կատարվել է հանցագործություն ու որևիցե կոնկրետ մարդու ձերբակալման հրաման չի ստորագրվել, նրան չեն ձերբակալում կամ նրան մեղադրանք չեն ներկայացնում, մենք, իհարկե, կարող ենք հարցազրույցներ ունենալ ականատեսների հետ (խուսափելով, ինչը և սովորաբար արվում է, կոնկրետ այն մարդուն մատնացույց անելուց, ով իբր կատարել է հանցագործությունը, կամ նրա անունը տալուց), ինչպես նաև տալ ոստիկանության կողմից կասկածվող փախստականի նկարագրությունը և ցուցադրել հեռուստատեսությամբ: Այնուհետև, այն դեպքերում, երբ ինքը՝ ոստիկանությունը և կառավարության պաշտոնատարները խախտում են փաստաբանների ամերիկյան ասոցիացիայի հանձնարարականները և լուսաբանման կարիք զգացող պարագաներում հրապարակավ հրամցնում են կոնկրետ վկայություններ, որոնք մատնանշում են մարդու մեղավորությունը՝ ներառյալ խոստովանությունները, կամ բերում են ոստիկանությանը հայտնի տեղեկություններն այդ մարդու անցյալի վերաբերյալ, մեր պարտականությունը չէ դրանք գրաքննչության ենթարկել, եթե մենք գտնում ենք, որ հայտարարություններն ամբողջությամբ կամ մասամբ արժանի են լուսաբանման: Վերջինիս ամենացայտուն օրինակն է այն դեպքը, երբ Դալլասի ոստիկանապետը բոլորի առջև թափահարում էր հրացանն ու ասում, որ Օսվալդը հենց այդ հրացանն է օգտագործել, և ոչ մի կասկած չկա, որ նա է հանցագործը: Այդպիսին էին և Նիքսոնի խոսքերը Մենսոնի մեղավորության մասին, որ ասվել էին նախքան Մենսոնին դատապարտելը: Սրանք բաներ են, որոնց մասին մենք չենք կարող և չպետք է լռենք: Նիքսոնն ու ոստիկանապետը, հնարավոր է, հիմնովին սխալ էին, սակայն մենք չենք կարող թույլ տալ մեզ հանդես գալու Աստծո դերում և վիթխարի հասարակական հետքորթություն հարուցող այդ նշանակալի, հասարակական կարևորության կոնկրետ հանգամանքներում ձևանալ, թե այդ իրադարձությունները չեն եղել:

Այս հիմնական, ընդհանուր սկզբունքները մեզ կոնկրետ պատասխան չեն տա ամեն դեպքի համար, և շատ դեպքերում մենք ստիպված պիտի լինենք կոնկրետ հանգամանքների վրա հիմնված կոնկրետ լուծումներ գտնել: Սակայն այստեղ հիշատակված սկզբունքները պետք է ուղղություն տան մեզ և օգնեն կատարելու շահերի պաշտպանի դերը հատկապես այն պարագաներում, երբ խոսքը վերաբերում է արդարադատության կայացմանը, միաժամանակ մենք պետք է հոգանք ամբաստանյալների և մեղադրողների՝ արդար դատ ու դատաստան անելու իրավունքի մասին:

Ինֆորմացիոն նյութեր

Ոչ մի ինֆորմացիոն նյութ (տեսա-, ձայնա-, գրավոր կամ մեկ այլ) չի կարող ընդգրկվել կամ օգտագործվել հեռարձակման նպատակով, եթե չի բավարարում հետևյալ չափանիշները.

1. Հեռարձակման ժամանակ պետք է հստակ ներկայացվեն ինֆորմացիոն նյութերի աղբյուրները⁵:

2. Ինֆորմացիոն նյութերը պետք է խմբագրվեն լիովին, այն ծավալով, որն անհրաժեշտ է դրանցից ողջ պրոպագանդան ու գովազդը հեռացնելու համար:

3. Տեսա-ձայնագրված ինֆորմացիոն նյութերին ուղեկցող գրավոր ինֆորմացիոն նյութերն ու սցենարները կարող են չընդգրկվել հեռարձակման մեջ, սակայն դրանք կարող են օգտագործվել միայն որպես սկզբնաղբյուր, որոնք ենթակա են ստուգման սովորական կարգով:

4. Չպետք է լինի պարտավորություն, որ ինֆորմացիոն նյութերն օգտագործվելու են մասամբ կամ ամբողջությամբ կամ որ օգտագործելիս դրանք չպետք է խմբագրվեն:

5. Առանց Սի-Բի-Ղի-ի Պրեզիդենտի նախնական հաստատման չեն կարող օգտագործվել այն ինֆորմացիոն տեսա- կամ հնչյունային նյութերը, որոնք վերաբերում են կարևոր հասարակական նշանակություն ունեցող վիճելի հարցի և որոնք առաջարկվում են մեզ որպես հեռարձակման նյութ՝ առանց մեր նախնական շահագրգռության:

6. Առանց Սի-Բի-Էս Նյուսի փոխպրեզիդենտի կամ հասարակական-քաղաքական բաժնի փոխպրեզիդենտի նախնական համաձայնության (կախված այն բանից, թե ում համաձայնությունն է անհրաժեշտ) չեն կարող օգտագործվել այն ինֆորմացիոն տեսա- կամ հնչյունային նյութերը, որոնք վերաբերում են կարևոր հասարակական նշանակություն ունեցող վիճելի հարցի, և որոնց ստացման խնդրում մենք շահագրգռված ենք:

7. Կարևոր հասարակական նշանակություն ունեցող վիճելի հարցի վերաբերվող, մեզ համար հետաքրքրություն ներկայացնող կամ չներկայացնող ինֆորմացիոն տեսա կամ հնչյունային նյութերը, պետք է նույնականացվեն դրանք տրամադրող աղբյուրի հետ այն հաղորդման մեջ, որում օգտագործվում են ինֆորմացիոն նյութերը: Բացի այդ, եթե աղբյուր է հանդիսանում որևէ կորպորացիա, կոմիտե, միավորում կամ այլ խումբ կամ իրավական անձ, աղբյուրի ղեկավար աշխատակիցների ցուցակը պետք է ներկայացվի ի ծանոթացումն հասարակայնությանը: Այդ ինֆորմացիան պետք է ժամանակին ներկայացվի Սի-Էն-Ղի-ի վարչական բաժնի ավագ փոխպրեզիդենտին, գրանցվի այդտեղ, և պահպանվի: Այս վերջին պահանջը՝ ղեկավար աշխատակիցների ցուցակի վերաբերյալ, կատարվում է անկախ այն բանից, հետաքրքրում է մեզ այդ նյութը, թե՛ ոչ:

Հարցազրույց (13 հուլիսի 1978 թ.)⁶

Չեն թույլատրվում այնպիսի հարցազրույցներ, որոնք ինքնաբերական ու հանպատրաստից չեն, եթե հատուկ դրան հավանություն չի տվել Սի-Էն-Ղի-ի Պրեզիդենտը: Նման հավանություն Պրեզիդենտը տալիս է միայն այն հազվագյուտ և անսովոր իրավիճակներում, երբ հարցազրույցի ինֆորմացիոն կարևորությունը բացահայտորեն գերազանցում է այն վնասը, որ կարող է հասցնել այդ ձեռնարկումը, և ծանրակշիռ դրդապատճառներ կան նման

⁵ Գոյություն ունի մեկ բացառություն: Եթե ինֆորմացիոն նյութերի պրոպագանդիստական կամ գովազդային հատկանիշներն առնչվում են հաղորդման հետ, ապա քննարկելով, կարող են այդ նպատակով օգտագործվել հաղորդման մեջ, սակայն եթե միայն աներկբա բնորոշվել են որպես պրոպագանդա կամ գովազդ:

⁶ «Հարցազրույց» (ինտերվյու) տերմինը տվյալ չափանիշում ներառում է հարցազրույցը, քննարկումները, համաժողովները, բանավեճերը և նմանակից բովանդակության այլ հաղորդումները:

ծեռնարկումն իրականացնելու համար: Այն, թե ինչ չափով հարցազրույցը ինքնաբերական ու հանպատրաստից չէ, պետք է պարզ լինի հեռարձակման ժամանակ, և զրուցակցին հարցազրույցից առաջ պետք է տեղեկացնել այն մասին, որ դա պիտի արվի:

Հարցազրույցն ինքնաբերական և հանպատրաստից չէ, եթե.

1. - հարցերը զրուցակցին են ներկայացվել վաղօրոք (սակայն հարցազրույցը կդիտվի որպես ինքնաբերական ու հանպատրաստից, եթե նման նախնական ծանոթացումը բովանդակի հարցերի ուղղվածությունն ընդհանրապես, որոնց կոնկրետ հարցերը կդիտարկվեն),

2. - համաձայնություն կա կոնկրետ հարցեր դիտարկելիս չանդրադառնալ որոշակի ընդհանուր բնագավառի,

3. - տեսագրությունը, ձայնագրությունը կամ հարցազրույցի պատճեն ներկայացվում է հարցազրույց տվողին՝ նրա հավանությունը ստանալու կամ խմբագրման պրոցեսին մասնակցելու համար,

4. - ֆիզիկական վիճակի և խցիկի առջև շարժվելու փորձերը չեն դիտվում որպես հարցազրույցի փորձեր՝ տրված չափանիշներին համապատասխան:

Կարող են օգտագործվել գործողության նկատմամբ լսարանի վերաբերմունքը ժամանակի ռեալ մասշտաբում պատկերող կադրեր, և հակառակ կողմից նկարահանված կադրեր, բացառությամբ հետևյալ դեպքերի.

- եթե ամբողջ հաղորդումը կամ դրա ամբողջական մի մասը բաղկացած է մեկ հարցազրույցից, որտեղ հարցազրույց տվողը էական դեր է խաղում: Այս դեպքում մի քանի խցիկների օգտագործումը կբացառի գործողության նկատմամբ լսարանի վերաբերմունքը ցուցադրող և հակառակ կողմից արված կադրերի անհրաժեշտությունը՝ ժամանակի ռեալ մասշտաբում: Սակայն եթե, տարածության, ժամանակի կամ այլ օպերատիվ պահանջմունքների հետևանքով, անհնար է մի քանի խցիկների օգտագործումը, Սի-էն-Դի-ի Պրեզիդենտը կամ ավագ փոխպրեզիդենտը կարող են բացառություն թույլատրել:

- եթե հարցազրույց տվողը (կամ նրա ներկայացուցիչը) ներկա չէ հարցազրույցին զուգահեռ ցուցադրվելիք ժամանակի ռեալ մասշտաբում գործողության նկատմամբ լսարանի վերաբերմունքը ցուցադրող կամ հակառակ կողմից արված կադրերի նկարահանմանը: Եթե նրանցից ոչ մեկը չի կարող սպասել գործի ավարտին, նպատակադրումն իրականացվում է սոսկ այն բանից հետո, երբ ամեն ինչ բացատրվել է հարցազրույցը տվողին և հավանություն ստացել նրա կողմից:

- եթե փոփոխված հարցերը խոսքերանգով, բնույթով և բովանդակությամբ չեն համապատասխանում են իրական հարցերին.

- եթե դրանք ինչ-որ կերպ աղավաղում կամ փոփոխում են այն, ինչն իսկապես եղել է իրականում: Օրինակ՝ եթե լսարանի արձագանքն իրականում եղել է ծիծաղ, ապա ժամանակի ռեալ մասշտաբում լսարանի արձագանքը ցուցադրող կադրերը նույնպես պետք է ծիծաղ բովանդակեն:

Ամեն հաղորդման խմբագիր և (կամ) պրոդյուսոր պետք է ուշադիր ծանոթանա գործողության նկատմամբ լսարանի վերաբերմունքը ցուցադրող բոլոր կադրերին, դրանց վերջնական, խմբագրված տարբերակին և բոլոր փոփոխված հարցերը համեմատի սկզբնական հարցերի հետ՝ համոզվելու համար, որ դրանց օգտագործումը չի աղավաղում կամ չի փոխում սկզբնական հարցերի պատասխանների ու արձագանքի բովանդակությունը, խոսքերանգը կամ իմաստը: Փոփոխված հարցերը և վերջնական խմբագրումը չեն կարող

օգտագործվել վատ ձևակերպված կամ վատ առաջադրված սկզբնական հարցը շտկելու նպատակով:

(1 նոյեմբերի 1976 թ.) Հարցազրույցի օբյեկտն իրավունք չպիտի ունենա ընտրելու հարցազրույց վարողին, բացի այդ՝ ռեպորտաժի այլ տեսակներում ռեպորտաժի օբյեկտն իրավունք չպիտի ունենա ընտրելու հարցազրույց վերցնող կամ իրադարձությունը լուսաբանող թղթակցին:

(1 նոյեմբերի 1976 թ.) Բոլոր հարցազրույցները՝ բացառությամբ ուղիղ եթերի կամ նախապես տեսագրված հարցազրույցների հեռարձակման, ենթակա են խմբագրման, և Սի-Բի-Էս-ի ծառայողներից ոչ մեկը չպիտի երաշխավորի հարցազրույցի օբյեկտին, որ հարցազրույցը հաղորդվելու է լրիվ ու չի խմբագրվելու: Բացառություններ այս դրույթից կարող են արվել միայն առավել արտասովոր պայմաններում և միայն Սի-Էն-Դի-ի Պրեզիդենտի կողմից:

Հարցազրույց տվողները վարձատրություն կարող են չստանալ «թեժ նորությունների» կամ «թեժ նորությունների» կողմնորոշված ծրագրերին մասնակցելու համար: Այլ ծրագրերում հարցազրույց տվողին կարելի է վճարել կամ **ծրագրին մասնակցելու անվանական գումարը,**

կամ լրագրուցի գումար՝ հետևյալ հանգամանքներում.

- երբ ամբողջ հաղորդումը կամ նրա լրիվ մասը կառուցվում է մեկ հասարակական դեմքի շուրջ, և արված է հայտնի մեկնաբանի կամ հեղինակի էլեկտրոնային հուշերի կամ էլեկտրոնային հոդվածի տեսքով,

- երբ հարցազրույց տվողը հիմնական դեր է խաղում հաղորդման մեջ՝ լինելով ոչ հասարակական պրոֆեսիոնալ փորձագետ (օրինակ՝ պրոֆեսոր, տնտեսագետ), և նրա վարձատրությունը կատարվելու է դասախոսության հոնորարի տեսքով,

- հարցազրույց տվողը հասել է մեծ պաշտոնի և ճանաչման այնպիսի ասպարեզներում, ինչպիսիք են վայելքների ինդուստրիան, գրականությունը, սպորտը, և նրանից հարցազրույց կարելի է վերցնել միայն վճարի դիմաց:

(22 հունվարի 1977 թ.) Համապատասխան վճարում, անշուշտ, կարելի է տալ ինֆորմացիա տրամադրող անձանց, խորհրդատուներին և այլ անձանց, ովքեր ծառայություններ են մատուցում կապի, ինֆորմացիայի և շփումների գծով: Սակայն եթե նման որևէ անձից հարցազրույց է վերցվում այն հաղորդման կապակցությամբ, որի համար նա վարձատրվում է վերը նշված ծառայությունների մատուցման համար՝ մենք պետք է նրան դիտենք որպես մեզ մոտ վարձու խորհրդական աշխատող:

Հարցազրույցներ դժբախտ պատահարներից և այլ ողբերգական իրավիճակներից տուժածների կամ նրանց ազգականների հետ

Թեև հնարավոր չէ ձևակերպել խիստ ու հաստատուն կանոններ, որոնք ընդգրկելին ամեն մի չնախատեսված հանգամանք՝ բերվող դրույթներն, առհասարակ, կիրառելի են նման հարցազրույցների համար:

- Այդ հարցազրույցներից հարկ է խուսափել՝ բացառությամբ այն դեպքերի, երբ դրանք էական կարևորություն ունեն շարադրվող նյութի համար: Օրինակ՝ երբ լույս են սփռում կատարվածի վրա կամ մատնանշում են այն հանգամանքը, որը կարող է օգնել ապագայում խուսափելու ողբերգական իրավիճակներից:

- Անհրաժեշտ է նման հարցազրույց խնդրելիս կամ վերցնելիս զսպվածություն դրսևորել:

- Չվերցնել հարցազրույց կամ փորձ չանել հարցազրույց վերցնել այն անձնավորությունից, որն ըստ բոլոր նշանների, գտնվում է շոկի վիճակում:
- Չփորձել հարցազրույց վերցնել քանի դեռ այդ թույլտվությունը չի ստացվել հարցազրույց տվողի կողմից:

Ժուռնալիստական հետաքննություն

Ժուռնալիստական հետաքննությունը, որը վաղուց ի վեր հանդիսանում է Սի-Էն-Դի-ի գործունեության տեսակներից մեկը, հաճախ բացահայտում է չափազանց լուրջ պրոբլեմներ և առաջ բերում սուր արձագանք: Եվ, այսուհանդերձ, մենք պետք է ազատ լինենք մեր իրավունքի մեջ և ավելին՝ մենք պարտավոր ենք բացահայտել քրեական գործունեության, իրավախախտումների և հասարակական վստահության չարաշահման փաստերը: Քանի որ ժուռնալիստական հետաքննության անցկացումը ներառում է տարբեր փաստերի բացահայտում և բարձրացում է դատավարության, քաղաքականության և օրենքի հետ կապված տարբեր հարցեր, ապա հնարավոր չէ ձևակերպել ժուռնալիստական հետաքննության կրկնրետ չափանիշներ, որոնցով կլուծվեին բոլոր հնարավոր պրոբլեմները և պատասխան կտրվեր բոլոր հնարավոր հարցերին: Ստորև բերված են այն հիմնական չափանիշները, որոնցով անհրաժեշտ է դեկավարվել այդ նուրբ բնագավառում մեր գործունեության ընթացքում.

Սի-Էն-Դի-ի կողմից իրականացվող ժուռնալիստական հետաքննությունը անցկացվում է Սի-Էն-Դի-ի Պրեզիդենտի գիտությամբ և վերհսկողության ներքո. նա քայլեր է ձեռնարկում երաշխավորելու համար, որ յուրաքանչյուր հետաքննություն կատարվի Սի-Էն-Դի-ի որդեգրած լրագրական ազնվության, փութաջանության և անկողմնապահության չափանիշներին համապատասխան:

Այն հարցը, թե հետաքննության ընթացքում Սի-Էն-Դի-ի անձնակազմի ստացած ինֆորմացիան հնարավոր հանցագործության մասին պե՞տք է արդյոք տրամադրվի պետական իշխանության մարմիններին՝ ամեն առանձին դեպքում կախված է լինելու այն փաստերից, որոնք դիտակվելու են (իրավաբանական բաժնի հետ խորհրդակցելուց հետո) պոտենցիալ հնարավոր հանցագործության և հետաքննության նպատակից ելնելով: Կարող են լինել հանգամանքներ, երբ նման տեղեկացումը լինի ոչ պարտադիր (օրինակ՝ ակնհայտ է, որ պաշտոնատար անձանց կողմից կատարված պաշտոնական հանցագործության փաստերի ժուռնալիստական հետաքննությունը կխափանվի, եթե հետաքննության արդյունքների մասին տեղյակ պահվեն նույն այդ պաշտոնատար անձինք): Մյուս կողմից, ինֆորմացիան, որ հնարավոր հանցագործությունը սպառնում է մեկի կամ շատերի սեփականությանը (օրինակ, հրկիզում, բռնաբարություն, սպանություն, խռովություն), պետք է ժամանակին տրամադրվի համապատասխան պաշտոնատար անձանց:

Հարցազրույցի կամ ռեպորտաժի խնդրանքով քաղաքացիներին կամ կազմակերպություններին դիմելիս՝ անհրաժեշտ է խուսափել նրանց թյուրիմացության մեջ զգելուց: Թյուրիմացության մեջ զգելն ամեն դեպքում պարտադիր չէ. ռեպորտյորների և պրոդյուսերների անկեղծությունը հաճախ ավելի են օգնում նպատակին հասնել:

Հազվագյուտ դեպքերում կարևոր նյութը չի կարող ստեղծվել առանց ռեպրոտյորի կամ պրոդյուսորի կողմից իր ինքնությունը թաքցնելու: Սակայն դա պետք է բացառություն լինի և թույլատրվի, եթե միայն ծանրակշիռ պատճառ կա ենթադրելու, որ հակառակ դեպքում դատապարտելի գործունեության փաստերը չեն հասցվի հասարակայնությանը:

Եթե Սի-Էն-Դի-ի Պրեզիդենտը որոշի, որ կոնկրետ հետաքննության նախագիծը կարող է բարձրացնել հատուկ կարևորության հարցեր, և կարիք կլինի Սի-Բի-Էս-ի հիմնական քաղաքականության մեկնաբանությունների, կամ եթե հետաքննության նախագիծը կարող է Սի-Էն-Դի-ի անձնակազմի կողմից օրենքի խախտման պատճառ դառնալ, ապա այդ ծրագրի իրագործումը սկսելուց առաջ անհրաժեշտ է խորհրդակցել իրավաբանական բաժնում՝ հետաքննության ընթացքում մինչև որոշակի աստիճան պահպանելով տրված հանձնարարականները: Ասվածը չի ենթադրում որևէ նահանջ այդ ոլորտում նախկինում կուտակված փորձից: Փորձը ցույց է տալիս, որ իրավաբանական բաժնի ներգրավման չափը տարբեր իրավիճակներում կարող է էապես տարբեր լինել: Եվ մեր իրավաբանները պիտի շարունակեն հանդես գալ որպես իրավաբաններ և ոչ թե նորությունների լուսաբանման մասնակիցներ:

Սի-Էն-Դի-ի անձնակազմը ինֆորմացիա հավաքելու կամ նորությունների պատրաստման փուլում չի կարող կանխամտածված կերպով մասնակցել որևէ հանցավոր գործողության, նաև չպետք է որևիցե մեկին հրահրի կամ դրդի հանցագործություն կատարել: Սակայն ամեն կոնկրետ դեպքում կարող են բացառություններ լինել՝ նույնիսկ այդօրինակ բացարձակ կանոնից: Օրինակ՝ որոշ թեմաներ կարող են այնպիսի ժուռնալիստական հետաքննություն պահանջել, որը պարունակում է քրեական օրենսդրությունը տեխնիկական տեսակետից խախտող քայլեր. ասենք՝ հրազենի ձեռքբերում կամ առգրավում (այնտեղ, ուր դա արգելված է), կամ ոգելից խմիչքների գնում «չոր օրենք» կիրառող նահագներում՝ այնպիսի ռեպրտաժների ստեղծման համար, որոնք պիտի ցույց տան, թե որքան հեշտ է դրանք ձեռք բերելը: Սակայն անգամ այդօրինակ բացառիկ գործողությունները պետք է կշռադատված լինեն: Մյուս կողմից, բնականաբար, կան գործողություններ, որոնք չեն կարող թույլատրվել՝ անկախ հետաքննվող գործի կարևորությունից: Նման գործողության առավել վառ օրինակներից է մեկ ուրիշ անձի վնաս պատճառելը: Այս երկու ծայրահեղությունների միջև ընկած են բազում բարդ հարցեր: Տվյալ չափանիշների միակ հիմնական նպատակն այն երաշխիքն է, որ այդ հարցերը չեն բարձրացվի առանց սեփական գործողությունների համար պատասխանատվություն կրելու անհրաժեշտության մանրակրկիտ քննարկման:

Երաժշտական ձևավորում

Չափանիշները, որոնցով ղեկավարվում են Սի-Էն-Դի ընկերությունում հաղորդումների մեջ երաժշտությունն օգտագործելիս, պատկանում են այն հիմնականների թվին, որոնց վրա հենվում են հաղորդումներ պատրաստելիս: Այդ չափանիշները հանգում են հետևյալին. ամեն ինչ հաղորդման մեջ պետք է լինի այն, ինչ դրա տակ հասկացվում է: Համապատասխանաբար, ոչ ռեալ և ոչ էլ թույլատրելի է «թեժ նորությունների» ծրագրերին կամ վավերագրական հաղորդումներին այնպիսի երաժշտական ձևավորում տալ, որը կարող է զուտ

գեղարվեստական երաժշտական ֆոն ստեղծել և որը իրական կապ չունի հաղորդման բովանդակության հետ:

Սակայն գոյություն ունեն դեպքեր, երբ երաժշտությունն իրոք հանդիսանում է պատումի մասը. օրինակ՝ երաժշտությամբ ուղեկցվող ցույցերն ի պաշտպանություն մարդու իրավունքների կամ պաշտոնական միջոցառումները, որոնց անցկացմանը նվագախումբ է մասնակցում: «Թեժ նորությունների» ծրագրերում, վավերագրական հաղորդումներում նման երաժշտության օգտագործումը, բնականաբար, ընդունելի է: Ավելին՝ վավերագրական հաղորդումներում, մեկ անգամ հնչած նման երաժշտությունը անհրաժեշտ դեպքում կարող է կրկնվել նաև հաղորդման մյուս համապատասխան մասերում:

Սի-էն-Դի-ի թույլտվությամբ կարող է օգտագործվել և այնպիսի երաժշտություն, որը չի հանդիսանում պատումի մաս, սակայն որոշակիորեն առնչվում է դիտարկվող թեմային. ասենք՝ նորությունների հետ կապ չունեցող թեմաներին նվիրված այնպիսի վավերագրական հաղորդումներում, ինչպիսիք են ուղևորությունները, պատմական կամ մշակութային իրադարձությունները: Օրինակ կարող են ծառայել ճանապարհորդություններին նվիրված հաղորդման մեջ այն երկրի երաժշտության օգտագործումը, որի մասին խոսվում է, կամ պատմական հաղորդման մեջ ներկայացվող պատմական շրջանի երաժշտության օգտագործումը:

(11 ապրիլի 1979 թ.) Ոչ մեծ մի երաժշտական ներդիր կարող է օգտագործվել որևիցե սերիալի հերթական մասի անվանն ուղեկցելու համար, սակայն միայն Սի-էն-Դի-ի Պրեզիդենտի հավանության դեպքում: Նման երաժշտությունը կարող է օգտագործվել միայն հիմնական անվանման հետ և ծառայել միակ նպատակի՝ նշել սերիալը: Այդ երաժշտությունը չի կարող օգտագործվել հիմնական նյութը շարադրելու համար:

Առարկություն հարուցող նյութի հեռարձակում

Գոյություն չունի և չի կարող ունենալ մեկ ընդհանուր սկզբունք, որը լուծեր վերոհիշյալ խնդրին կապված բոլոր կոնկրետ հարցերը, երբ դրանք ծագում են: Ընդհակառակը՝ լսարանի էական մասի համար հնարավոր վիրավորական նյութի ընդգրկմանը վերաբերող վճիռը պետք է հիմնված լինի կոնկրետ, իրավիճակի հետ առնչվող փաստերի քննարկման, արդի հասարակական ստանդարտների, նորությունների գնահատման ընդհանուր չափանիշների, հետևյալ հիմնական սկզբունքների պահպանման վրա.

- երբ վիրավորական արտահայտությունները օգտագործվում են նկարագրվող իրադարձությունների ժամանակ, այդ արտահայտությունների ընդգրկումը հաղորդման մեջ կախված է իրադարձության բնույթից և այդ իրադարձությունը այն տեսքով ներկայացնելուց, որն իրականում եղել է: Օրինակ՝ երբ սպասվում էր ուղիղ ռեպորտաժ Կոնգրեսում պրեզիդենտ Նիքսոնի իմփիչման վերաբերյալ որոշում ընդունելու ընթացքի մասին (ներառյալ պրեզիդենտի խոսքերի ձայնագրությունը), վճռվեց, որ ռեպորտաժի պատմական և ժուռնալիստական կարևորության պատճառով վիրավորական արտահայտությունները պետք է հեռարձակվեն այնպես, ինչպես որ եղել է իրականում:

- Երբ հայտարարությունները որևիցե իրադարձության կամ թեմայի կապակցությամբ պարունակում են վիրավորական արտահայտություններ (ոչ Սի-ԷՆ-Դի-ի անձնակազմի կողմից), ապա այդ հայտարարությունների ընդգրկումը հաղորդման մեջ կախված կլինի այնպիսի գործոններից, ինչպիսիք են.

1. իրադարձության կամ թեմայի կարևորությունը,
2. հայտարարության կարևորությունն ընդհանրապես կամ դրա արժեքավոր ու տեղին լինելը իրադարձության կամ թեմայի համար,
3. օբյեկտիվության աստիճանը. այսինքն որոշ վիրավորական արտահայտություններ կթույլատրվեն, միևնույն ժամանակ մյուսները կարգելվեն:

- Նույն այդ ընդհանուր սկզբունքը, որ բերված է նախորդ պարբերությունում, կիրառելի է այլ անձանց հայտարարությունների պարունակած այն վիրավորական արտահայտությունների համար, որոնք վկայակոչվում են Սի-ԷՆ-Դի-ի անձնակազմի կողմից, այն տարբերությամբ, սակայն, որ տվյալ դեպքում շատ ավելի խիստ չափանիշներ կկիրառվեն արտահայտության արժեքավորության և կարևորության հարցում և ավելի կտրական չափանիշներ՝ դրանց «օբյեկտիվության» վերաբերյալ:

Արտաքին մուծումներ արտադրական ծախսերում

Սի-ԷՆ-Դի-ն կողմնակի անձանցից և կազմակերպություններից մուծումներ չի ընդունում (կանխիկ դրամի, սեփականության, ծառայությունների և այլ տեսքով)՝ Սի-ԷՆ-Դի-ի պատրաստած հաղորդումների ծախսերը լրիվ կամ մասնակի հոգալու նպատակով:

Ստուդիայում չպատրաստված հաղորդումների թույլատրելիությունը

Ստուդիայում չպատրաստված հաղորդումները Սի-ԷՆ-Դի-ն կարող է թույլատրել հեռարձակման, եթե դրանք համապատասխանում են հետևյալ դրույթներին.

- Սի-ԷՆ-Դի-ի աշխատակիցներ չհանդիսացող վավերագրական և ինֆորմացիոն ծրագրերի պրոդյուսորների հետ կնքած պայմանագրերը պետք է պահանջեն նրանցից բացահայտել իրենց կողմից օգտագործվող ցանկացած արտադրական տեխնիկան, որը տարբերվում է ծրագրերի պատրաստման համար Սի-ԷՆ-Դի-ի կիրառած տեխնիկայից⁷: Համապատասխանությունն այս պահանջին Սի-ԷՆ-Դի-ի ղեկավարությանը թույլ կտա որոշել՝ հրաժարվել՝ հաղորդումից, թե՞ ընդունել այն և հեռարձակել՝ ուղեկցող պարզաբանումներով ու կրճատումներով հանդերձ:

- Ստուդիայի կողմից չպատրաստված, վերջին նորություններ և վիճելի պրոբլեմներ ամփոփող հաղորդումների օգտագործումը թույլատրելի է, եթե միայն դրանք պատրաստված են վստահելի, ինֆորմացիայի բնագավառում աշխատող բարի համբավ վայելող կազմակերպությունների կողմից: Սի-ԷՆ-Դի-ն

⁷ Յուրաքանչյուր կողմնակի պրոդյուսորի կտրամադրվի Սի-Բի-Էս Նյուսի չափանիշների տեստի պատճեն՝ բացատրական նամակով՝ հեռարձակման վերաբերյալ և այն վկայագրի օրինակով, որը Սի-Դի-ԷՆ-ը ներկայացնում է ավարտված հաղորդման հետ մեկտեղ:

ստուգման կենթարկի յուրաքանչյուր այդպիսի հաղորդման նախապատրաստությունը՝ երաշխավորելու այն և համապատասխանությունը ճշտելու Սի-Էն-Դի-ի այնպիսի հիմնորոշ չափանիշների հետ, որպիսիք են անաչառությունն ու հավաստիությունը, և այն կանոններին, որոնք նախատեսում են կրկնական օգտագործումն ու խմբագրական մշակումը:

Անհատական քննադատության կանոնը

- Համաձայն կապի ֆեդերալ հանձնաժողովի կանոնի, եթե հաղորդումը բովանդակում է «հասարակական նշանակություն ունեցող վիճելի հարցի վերաբերյալ տեսակետի դրսևորում» և պարունակում է ցանկացած «կոնկրետ անձնավորության կամ մարդկանց խմբի» «անկեղծության, բնավորության, ազնվության կամ նմանօրինակ անձնական հատկանիշների» քննադատություն, ապա քննադատության տեսագրությունը, պատճեն կամ ճշգրիտ շարադրանքը հաղորդմանը հաջորդող յոթ օրվա ընթացքում պետք է տրվի այդ անձնավորությանը կամ մարդկանց խմբին՝ պատասխանի համար տրամադրելով համապատասխան ժամանակ⁸:

- Սի-Դի-Էն-ը ընդունել է ստորև բերվող աշխատակարգը, որպեսզի երաշխավորի համապատասխանությունը նշված կանոնին.

(i) Սի-Բի-Էս-ի իրավաբանական բաժինը պատրաստել է այն ռադիո և հեռուստատեսային հաղորդումների ցուցակը, որոնք դուրս են անհատական քննադատության կանոնից՝ տարածելով այդ ցուցակը Սի-Էն-Դի-ի ղեկավար աշխատողների շրջանում:

(ii) Այդ ցուցակի մեջ չմտած ամեն հաղորդման եթեր հեռարձակելուց հետո, պատճեն անհապաղ ներկայացվում է համապատասխան ղեկավար աշխատակցին(ուհուն), որը լավատեղյակ է Սի-Էն-Դի-ի պարտավորությունների և անհատական քննադատության կանոնի համապատասխանությունից:

(iii) Ղեկավար աշխատակիցը(ուհին) անհապաղ և ուշադիր կարդում է պատճեն, և եթե այդ ընթացքում նրա մեջ գոնե հարց է ծագում՝ եղե՞լ, թե՞ չի եղել անհատական քննադատություն, նա պատճեն անմիջապես ուղարկում է Սի-Բի-Էս-ի իրավաբանական բաժին՝ վճիռ կայացնելու համար:

(iv) Եթե ուսումնասիրության արդյունքում որոշվել է, որ առկա է անհատական քննադատության փաստ, ապա հաղորդմանը հաջորդած յոթ օրվա ընթացքում քննադատության ենթարկված անձնավորությանը կամ մարդկանց խմբին հաղորդման տեքստի պատճենին կից նամակ է ուղարկվում՝ առաջարկելով ընձեռնել պատասխանի հնարավորություն և խնդրելով կապվել

⁸ Անհատական քննադատության կանոնը չի կիրառվում.

(i) օտարերկրյա խմբերի կամ օտարերկրյա հասարակական գործիչների քննադատության ժամանակ;

(ii) «օրինական հիմունքներով առաջարկված թեկնածուների, նրանց լիազոր ներկայացուցիչների, նրանց հետ նույն ընտրարշավին մասնակցող անձանց, նրանց լիազոր ներկայացուցիչների, ընտրարշավին թեկնածուների հետ մասնակցող անձանց կողմից արտահայտած քննադատության նկատմամբ,

(iii) «նորությունների բարեխիղճ հաղորդումների, բարեխիղճ հարցազրույցների կամ իրադարձությունների բարեխիղճ շարադրման (ներառյալ վերոհիշյալ հաղորդումներում մեկնաբանությունների և վերլուծությունների)» նկատմամբ: Անհատական քննադատությունը կիրառելի է վավերագրական հաղորդումների նկատմամբ:

Սի-էն-Դի-ի ղեկավար աշխատակցի հետ՝ պատասխան հաղորդման ժամանակը համաձայնեցնելու համար⁹:

- Այն իրավիճակներում, երբ քննադատության ենթարկված անձնավորությունը պահանջում է, որ պատասխանը տեղ հասցնի փոխարինողը, իրավաբանական բաժինը անհապաղ պետք է տեղեկացվի այդ մասին, քանի որ Սի-Բի-Էս-ը ձեռնպահ է մնում նման պատասխաններից:

Հարցումների և հետազոտությունների արդյունքների հաշվետվություններ (17 ապրիլի 1978 թ.)

Հիմնվելով տնօրենի տրամադրած տեղեկությունների վրա՝ հարցումների և հետազոտությունների, ուսումնասիրությունների բաժինները ժամանակ առ ժամանակ հարցումների հիման վրա հրապարակում են տարբեր կազմակերպություններին վերաբերող հուշագրեր, որպեսզի հեռարձակման բաժինը հնարավորություն ունենա գնահատական տալու հարցումներին առնչվող կոնկրետ կազմակերպության հուսալիությանը և մեթոդներին: Այդ հուշագրին անհրաժեշտ է անդրադառնալ հետազոտությունների արդյունքների ցանկացած օգտագործման դեպքում: Յուրաքանչյուր իրադարձության առիթով և բոլոր դեպքերում հաղորդման մեջ պետք է ընդգրկվեն հետևյալ տեղեկությունները.

Այն կազմակերպության հիշատակումը, որն անցկացրել է հարցումը: (Եթե հարցումի հովանավորը հատուկ շահագրգռված խումբ է, ապա այդ փաստը ևս պետք է նշվի մեր հաղորդումներում):

Հարցազրույցների ստացման ժամանակը:

Երբ հետազոտման արդյունքները կազմում են հաղորդման «հիմնական» մասը (ի տարբերություն մի քանի խոսքով կարճ հիշատակման), հաղորդման մեջ պետք է ընդգրկել հետևյալ լրացուցիչ տեղեկատվությունը.

բնակչության ընտրությունը (համազգային մակարդակով, նահանգի մակարդակով և այլն),

սխալմունքի սահմանները:

Եթե կան ինչ-որ կասկածներ կապված հարցման կամ հետազոտման հիմնավորվածության, նշանակության կամ մեկնության վերաբերյալ, անհրաժեշտ է կապվել ընտրությունների և հետազոտման բաժնի տնօրենի կամ նրա նշանակած անձնավորության հետ՝ գնահատելու վիճահարույց պարագան:

Նախապես տեսա-ձայնագրված նյութ

⁹ Ինքնագրաքննության վտանգից խուսափելու համար՝ Սի-էն-Դի-ն որդեգրել է այն սկզբունքը, որ անհատական քննադատության կանոնը չի ազդելու արտադրական մակարդակով ընդունվող նոր որոշումների վրա: Ընդհակառակը, «պիտի կիրառվի իրադարձությունների նորմալ շարադրում... Մենք գնահատականներ չենք տա՝ խուսափելով այն հետևանքներից, որոնք կարող են ծագել կապի ֆեդերալ հանձնաժողովի կանոնները կիրառելիս: Նման գնահատականների հետևանքը կարող է լինել մեր հրաժարումը լսարանի համդեպ պատասխանատվությունից և ազատ մամուլի ամերիկյան ավանդույթներից: Եթե, սակայն, ղեկավարության և իրավաբանական բաժնի մակարդակով անցկացված ստուգումներից պարզվի, որ տեղ է գտել անհատական քննադատության փաստ, ապա անհատական քննադատության կանոնը կարող է գործել իր ողջ ուժով:

Նախապես տեսա-ձայնագրված նյութը չպետք է մոլորեցնի: Դրա համար.

9 նոյեմբերի 1978 թ. - երբ ամբողջ սյուժեն տեսա-ձայնագրվում է «դրսում», ռեպորտյորները միշտ պետք է տեսա-ձայնագրեն ավարտը նույն այն վայրում, որտեղ ծավալվում է գործողության սյուժեն:

9 նոյեմբերի 1978 թ. - երբ անհնար է եղել տեսա-ձայնագրել սյուժեի ավարտը, և հեղինակային տեքստը ավելացվել է մեկ այլ տեղ՝ սյուժեի մուտքը պետք է հրամցվի այնպես, որ պարզ լինի, թե ռեպորտյորը գտնվել է այն վայրում, որտեղ կատարվել են նկարագրվող իրադարձությունները, իսկ ավարտը ռեպորտյորը այնպես պետք է կառուցի, որ հասկանալի լինի, թե որտեղ է անում տեսագրությունը. (օրինակ՝ «...հենց նոր ժամանեցիից»):

9 նոյեմբերի 1978 թ. - երբ ինչ-որ տեղ կատարված իրադարձությունների հեղինակային մեկնաբանությունը տեսա-ձայնագրվում է մեկ այլ վայրում, և ռեպորտյորը չի եղել իրադարձությունների կիզակետում, ապա ռեպորտյորի ինքնությունը և այն տեղը, որտեղ տեսագրվում է հեղինակային մեկնաբանությունը, պետք է մատնանշվեն կամ նախաբանում՝ հաղորդումը վարողի կողմից, կամ էլ վերջում՝ ռեպորտյորի կողմից: Այն փաստը, որ ռեպորտյորը չի գտնվել նյութի տեսա-ձայնագրման վայրում, հետագայում պետք է պարզաբանվի նախաբանում՝ խնամքով ընտրելով համապատասխան բայը. օրինակ՝ «ստացված նյութը մեկնաբանում է Ջոն Դոուն»: Այս մոտեցման խստիվ պահպանումը թույլ կտա խուսափել տպավորությունը ստեղծելուց, թե ռեպորտյորն է վարել ռեպորտաժը կամ գտնվել է այն վայրում, ուր ծավալվել է սյուժեի գործողությունը, այնինչ իրականում նա դա չի արել:

- Չի թույլատրվում հայտարարել, թե դիտողը կամ ունկնդիրը «տեղափոխվում է» այսինչ վայրը, բացառությամբ երբ հաղորդման ժամանակ իրոք միացվում է հեռարձակումն այդ վայրից: Այդպիսի հայտարարություն արգելվում է անել, երբ տեսագրությունը կամ ձայնագրությունը հաղորդվում են ոչ թե իրադարձության վայրից, այլ հեռարձակման կայանից:

- Եթե նյութը տեսա-ձայնագրվում է հասցեատիրոջը ներկայացնելուց առաջ կամ հետո, ապա հեռարձակման ժամանակ պետք է հստակ նշվի, որ դա հատուկ արվում է մեր խցիկների և միկրոֆոնների առջև:

- Եթե տեսա-ձայնագրված նյութը նորությունների ուղիղ եթերային հաղորդման ժամանակ տպավորություն է ստեղծում, թե գրանցված իրադարձությունները տեղի են ունենում իրականում, հաղորդման պահին, ապա, օգտագործման հետ միաժամանակ, պետք է նշվի նյութի նախօրոք տեսա-ձայնագրվածության փաստը՝ եթե ժամանակի գործոնը կարևոր է:

- Եթե ռեպորտյորի տեսա-ձայնագրված հաղորդումն ընդգրկվում է ուղիղ եթերային հեռարձակման մեջ, անհրաժեշտ է, որպեսզի ռեպորտյորը իր գրանցած հաղորդման վերջում աշխատի խուսափել ամենափոքր իսկ շարժումից կամ բառից, որոնք կարձանագրեին, թե ինքը հաղորդումը փոխանցում է ծրագիր վարողին:

Ուղիղ եթեր տրամադրելու վերաբերյալ պրեզիդենտական հարցումներ (16 հոկտեմբերի 1978 թ.)¹⁰

¹⁰ Մեր քաղաքականությունը ուղիղեթերային հեռարձակման առթիվ պրեզիդենտական հարցումների վերաբերյալ մշակվել է 1974 թվականի նոյեմբերին և հենց նույն ժամանակ էլ տարածվել Սի-Բի-Էս Նյուսի ղեկավարության շրջանում:

Համաձայնությունը պրեզիդենտական հարցումներին, կապված պրեզիդենտի ելույթների ուղիղաթերային հեռարձակման հետ, մեքենայորեն չեն երաշխավորվում: Ընդհակառակը, վաշինգտոնյան բյուրոն մեծ ջանքեր պետք է գործադրի հնարավոր առավել և ստույգ նախնական տեղեկություններ ստանալու համար: Այնուհետև, Սպիտակ տան ներկայացուցչի միջոցով, վաշինգտոնյան բյուրոն պետք է մանրամասն պարզի, թե արդյո՞ք Սպիտակ տան կարծիքով պրեզիդենտի ելույթը չափազանց կարևոր է ամերիկյան հասարակայնության համար: Եթե մեր ջանքերին ի պատասխան Սպիտակ տունը հայտնի, որ հարցը վերաբերում է ազգային անվտանգությանը կամ միջազգային հարաբերություններին, կամ՝ որ գոյություն ունեն այլ հանգամանքներ, համաձայն որոնց ազգային շահերի տեսակետից ցանկալի չէ որևիցե նախնական տեղեկություն տրամադրել՝ մենք կընդունենք այդ բացատրությունները, եթե կասկածանքի բացահայտ շարժառիթներ չլինեն:

Կախված 1-ի ստացված պատասխաններից՝ Սի-Բի-Էս-ի կողմից ուղիղ եթեր տրամադրելու վերաբերյալ պրեզիդենտական հարցումը բավարարելու որոշում կայացնելիս, անհրաժեշտ է ղեկավարվել հետևյալ ցուցումներով.

- Եթե մենք ունենք բավականաչափ հուսալի ինֆորմացիա կամ բավականաչափ տեղեկություններ հարակից հանգամանքների մասին, որոնք թույլ են տալիս իրապես եզրակացնելու, թե ելույթը պետք է հաղորդել ուղիղ եթերում, ապա անտարակույս պետք է անել դա:

- Եթե մենք չունենք բավականաչափ նախնական ինֆորմացիա կամ տեղեկություններ, որոնք թույլ տալիս մեզ հանգելու նման եզրակացության, սակայն մեզ հատուկ հայտնում են, որ նախնական ինֆորմացիայի բացակայության պատճառը ազգային անվտանգության կամ ազգային այլ շահերն են, կամ՝ մեզ հատուկ հայտնել են, որ ելույթը բացառիկ կարևորություն ունի ամերիկյան հասարակայնության համար, ապա մեր վարանումները կվերանան՝ հոգուտ ելույթը ուղիղ եթեր հեռարձակելուն:

- Եթե մեզ տրամադրվել է բավականաչափ ինֆորմացիա եզրակացության հանգելու համար, և մեր եզրակացության իմաստն այն է, որ չկա ուղիղ հեռարձակման անհրաժեշտություն, ապա մենք այդուհանդերձ կքննարկենք նման հաղորդում տալու հնարավորությունը, եթե Սպիտակ տունը պարզորոշ ակնարկի, որ ելույթը արտակարգ կարևոր է լինելու ամերիկյան հասարակայնության համար: Տվյալ դեպքում որոշակիությունը կարող է ձեռք բերվել փոխզիջման հիման վրա: Ընդ որում՝ նախապատվությունը կտրվի Սպիտակ տան հավաստիացումներին հաղորդման արտակարգ կարևորության վերաբերյալ: Եթե որոշում կայացվի ուղիղ հեռարձակում տալու մասին, մենք պետք է հաղորդումից առաջ նշենք, որ հեռարձակվում է Սպիտակ տան խնդրանքով և պնդմամբ՝ թե այդ ելույթը հրատապ է ու կարևոր:

Պրեզիդենտի ելույթին պատասխանելու սկզբունքը

Երբ էլ որ պրեզիդենտը ռադիոյով կամ հեռուստատեսությամբ ելույթ ունենա ազգի առջև քաղաքականության այն հարցերի շուրջ, որոնց վերաբերյալ նշանակալի համազգային անհամաձայնություն կա, Սի-Բի-Էս-ը կտրամադրի ուրիշ հաղորդումներ՝ տվյալ քաղաքական հարցերի շուրջ այլ տեսակետներ շարադրելու համար:

Նման հաղորդումների տևողությունը և դրանց մասնակիցների կազմը պիտի որոշվեն Սի-ԷՆ-Դի-ի կողմից արեզիդենտի ելույթի համապատասխան փաստերի լույսով: Հաղորդումը եթերի համար պլանավորվում է առաջին իսկ հնարավորության դեպքում, սակայն ոչ ուշ, քան արեզիդենտի ելույթից մեկ շաբաթ հետո:

Պրեզիդենտի կամ մյուս կարևոր պետական դեմքերի ելույթից անմիջապես հետո Սի-ԷՆ-Դի-ն կներկայացնի իրադարձությունների սեփական վերլուծության շարադրանքը. նման միջոցառումը թվում է ցանկալի, իսկ համապատասխան նախապատրաստություն կարելի է անցկացնել:

Հասարակական անվտանգության ծառայությունների տեղեկատվություն (1 հոկտեմբերի 1979 թ.)

Հասարակական անվտանգության ծառայությունների տեղեկատվությունը, ինչպիսիք են ոստիկանության, հրշեջների, ծովային փրկարար ծառայությունների, օդազնացության ֆեդերալ վարչության ռադիոհաղորդագրությունները, չեն կարող վերահեռարձակվել առանց շահագրգռված պետական կազմակերպության նախնական թույլտվության: Պետական կազմակերպությունները, սովորաբար, համագործակցության են դիմում, երբ գտնում են, որ հեռուստատեսային կամ ռադիո վերահեռարձակումների ցանցը կարող է օգնել տեղեկատվության տարածմանը: Թույլտվությունը կարող է լինել կազմակերպության ուղարկած նամակի տեսքով կամ էլեկտրոնային փոստով առաքված ցուցում՝ այն բանից հետո, երբ ստացվել է բանավոր համաձայնություն: Նամակի կամ ցուցման պատճենները կարող են վերահանձնվել Նյու Յորքում գտնվող իրավաբանական բաժին՝ արխիվում պահելու համար:

Ի լրումն սրա՝ պետական կազմակերպությունների հասարակական անվտանգության ծառայությունների նմանօրինակ հաղորդագրությունները կամ մասնավոր չհեռարձակվող կայանների (ինչպիսիք են սիրողական ռադիոները) հաղորդումները չեն կարող տրվել ոչ ուղիղ եթեր, ոչ էլ հետաձգմամբ՝ առանց պետական կազմակերպության կամ մասնավոր կայանի տիրոջ ու կապի ֆեդերալ հանձնաժողովի թույլտվության: Կապի ֆեդերալ հանձնաժողովի թույլտվությունը կարելի է խնդրել ոչ պաշտոնապես՝ հեռախոսով, հետագայում, մեկ շաբաթվա ընթացքում, գրավոր հաստատում ներկայացնելու պայմանով՝ կցելով հեռարձակող կայանի գրավոր համաձայնությունը: Ցանկացած նման թույլտվություն պահանջելուց առաջ հարկավոր է ստանալ իրավաբանական բաժնի խորհրդատվությունը:

Իրավունքի փոխանցման ստացագիր

Պետք է ջանքեր գործադրվեն իրավունքի փոխանցման ստորագրված ստացագիր ստանալու համար բոլոր նրանցից, ովքեր հասարակական-քաղաքական հաղորդման մեջ հայտնվում են որպես հարցազրույց տվող կամ որևէ այլ կերպ, և ովքեր կարող են տվյալ հաղորդման մեջ ճանաչվել

արտաքինով կամ ձայնից¹¹: Ամեն այդպիսի ստացագրի համար տրվում է պարզևավճար՝ 5 ԱՄՆ-ի դոլարի չափով: Ստացագրերի համապատասխան ձևերը կարելի է ստանալ առևտրային բաժնի փոխարեզիդենտից: Եթե հանգամանքներն այնպես են դասավորվում, որ անհնար է դառնում ստորագրված ստացագիր վերցնել, այդ փաստի մասին պետք է զեկուցել առևտրային բաժնի փոխարեզիդենտին, որպեսզի նա հնարավորություն ունենա իրավաբանական բաժնում պարզելու, թե ինչ հնարավոր պրոբլեմներ կարող են ծագել տվյալ նյութը հաղորդման մեջ ինդոքրելու դեպքում: Դրանից հետո Սի-Էն-Դի-ի ղեկավարությունը կորոշի՝ օգտագործել տվյալ նյութը, թե՞ ոչ:

Սովորաբար ստացագիր չի պահանջվում այն անձանցից, ովքեր մասնակցում են «թեժ նորություններին» նվիրված հաղորդումներում: Սակայն երբ նման մասնակցությունը ներառում է իր մեջ և հատվածներ զվարճալի ծրագրերից, գեղարվեստական ֆիլմերից, վավերագրական հաղորդումներից և նման այլ աղբյուրներից, ստացագիրը կարող է անհրաժեշտ լինել՝ խուսափելու համար պայմանագրային, հեղինակային կամ արհմիութենական իրավունքի հետ կապված պրոբլեմներից: Հետևապես՝ ցանկացած այդպիսի ենթադրվող օգտագործման փաստի մասին հարկ է զեկուցել առևտրային բաժնի փոխարեզիդենտին, որպեսզի նա կարողանա իրավաբանական բաժնում պարզել, թե հարկավո՞ր է արդյոք ստացագիր վերցնել:

Ձայն ու հնչյունային էֆեկտներ

Մոնտաժային տեխնիկան կարող է պահանջել, որպեսզի բնական ձայնով նկարահանված սյուժեի մեջ ներդրվեն նույն սյուժեի այնպիսի տարրեր, որոնք (տեխնիկական պատճառներով, ինչպես, օրինակ, սարքավորման պակասը) նկարահանվել են առանց ձայնի: Նման դեպքերում ձայնը կարելի է ավելացնել, որպեսզի ապահովվի բնական ձայնի անընդհատությունն արդեն մոնտաժված մասում: Սակայն ձայնի ամեն այդպիսի ավելացում հնչյունային ֆոնը պահպանելու համար.

(i) պետք է հասցնել այն նվազագույնին, որ անհրաժեշտ է նպատակի իրականացման համար,

(ii) պետք է օգտագործվի բնական ձայնը, որը ձայնագրվել է սյուժեի նկարահանման ժամանակ՝ դրա հետ առնչություն ունեցող վայրում:

Ձայնային էֆեկտները չեն կարող օգտագործվել չհնչյունավորված սյուժեում՝ տպավորություն ստեղծելով, թե սյուժեն նկարահանվել է բնական ձայնով: Սակայն իրադարձության ժամանակ ձայնագրված ռեալ ձայնը կարող է օգտագործվել այդ իրադարձության չհնչյունավորված տեսագրության մեջ, երբ ձայնային հատվածները համադրվում են ցուցադրվող սյուժեի հետ:

Տեսա կամ հնչյունային ծրագրի համար ձայնագրված բնական ձայնը չի կարող ուժեղացվել կամ թուլացվել հնչողության ռեալ մակարդակի համեմատ՝

¹¹ Սակայն, այն դեպքերում, երբ հասարակական-քաղաքական հաղորդումը ներառում է շքերթի, ցույցի կամ մեկ այլ հասարակական իրադարձության հեռարձակում, սովորաբար ստացագիր չի պահանջվում այն անձանցից (ընդգրկված այդ հասարակական իրադարձության մեջ), ում մասնակցությունը հասարակական-քաղաքական հաղորդման մեջ, չնայած որ կարող են ճանաչվել, պարզ պատահականություն է: Եթե նման մասնակցությունը պատահական չէ, փաստերի մասին հարկ է զեկուցել առևտրային բաժնի փոխարեզիդենտին՝ դրանց գնահատման համար:

նպատակ ունենալով ստանալ դիտավորյալ մոնտաժային էֆեկտ: (Օրինակ՝ ծափահարությունների հնչողության մակարդակը չի կարող բարձրացվել՝ իրականում եղածից ավելի մեծ խանդավառության պատրանք ստեղծելու նպատակով): Սակայն հնչողությունը կարելի է կարգավորել այնպես, որպեսզի համապատասխանի տեխնիկական պահանջներին և սյուժեի ձայնային մատչելիությանը: (Օրինակ, եթե մամուլի ասուլիսի ժամանակ հարցը դժվար է լսել, քանի որ հարցնողը միկրոֆոնից հեռու է՝ վերարտադրման ժամանակ հնչողությունը կարելի է ավելացնել, որպեսզի հարցը հստակ լսվի):

Աղբյուրների նույնականացում (իդենտիֆիկացիա)

Քանի որ տեղեկություններ հավաքելիս անանուն աղբյուրների օգտագործումն անհրաժեշտ միջոց է, ուստի դա պետք է հավասարակշռվի հասարակության հավաստի տեղեկություններ ստանալու իրավունքին, իսկ ռեպորտյորներն ու պրոդյուսորները, հետևաբար, պետք է ընդունեն հնարավորին չափ մեծածավալ ինֆորմացիա տրամադրելու անհրաժեշտությունը՝ առանց վտանգելու այդ ինֆորմացիայի աղբյուրը կամ դրա հետ կապված հարաբերությունները:

(1 մարտի 1977 թ.) Երբ անհրաժեշտ է օգտագործել անանուն աղբյուր, Սի-Բի-Էս Նյուսը պետք է վճռի, որ ուրիշ այլ եղանակ գոյություն չունի ստանալու և ներկայացնելու նյութը, որ նյութը փաստացի է, որ այն ունի էական արժեք, ինչը արդարացնում է դրա օգտագործումը՝ հակառակ այն փաստի, որ մենք չենք կարող բացահայտել աղբյուրը, և որ աղբյուրին հարկ է վստահել որոշակի հանգամանքներում:

Եթե անհրաժեշտ է պաշտպանել աղբյուրը կամ աղբյուրները, ապա որոշ տեղեկություն պետք է ներկայացվի աղբյուրի բնույթի մասին, անշուշտ, այն պայմանով, որ այդ տեղեկությունը չհանգեցնի աղբյուրի բացահայտման: Երբ սյուժեն ներառում է իր մեջ որոշակի գործելակերպի պաշտպանություն, այնժամ նաև տեղեկությունը աղբյուրի բնույթի մասին պետք է բովանդակի աղբյուրի պատճառաբանությունը կամ աղբյուրի դիրքորոշումը՝ կապված քննարկվող հարցի հետ:

Երբ աղբյուրը մեկ ուրիշ լրատվական կազմակերպություն է, նա պետք է նույնականացվի (հիշատակվի) անվանաբար:

Որոշ դեպքերում, և դա աղբյուրը չբացահայտելու ամենածանրակշիռ պատճառն է, պաշտպանության ապահովումը կենսական անհրաժեշտություն է, հակառակ դեպքում աղբյուրը վտանգված է Սի-Բի-Էս Նյուսին տեղեկություններ տրամադրելու համար: Նման պայմաններում աղբյուրի լիակատար պաշտպանության ապահովումը կշարունակի մնալ Սի-Բի-Էս Նյուսի սկզբունքը: Սի-Բի-Էս Նյուսի աշխատակիցներին ըստ օրենքի հետապնդման և բանտային կալանավորման սպառնալիքի դեպքում, իհարկե, նրանք իրավունք ունեն բացահայտելու աղբյուրը, քանի որ վտանգվում է իրենց անձնական ազատությունը, և Սի-Բի-Էս Նյուսը չի կարող իրամայել նրանց ենթարկվելու բանտային կալանավորման կամ մեկ այլ պատժի: Սակայն հիմնական սկզբունքը, որին հետամուտ է Սի-Բի-Էս Նյուսը, ժուռնալիստների աղբյուրը չբացահայտելու իրավունքի պաշտպանությունն է: Այդպիսի դեպքերում աշխատակիցները կունենան Սի-Բի-Էս Նյուսի ամենայն աջակցությունը: Մեր սկզբունքն է՝ ժուռնալիստիկայի հարցերով փաստաբան տրամադրել

նորությունների բաժնի ծառայողների թվից, Սի-Բի-Էս-ի իրավաբանական բաժնից, և եթե շահագրգիռ անձը ցանկություն է հայտնում փաստաբան ունենալու նաև դրսից, ապա Սի-Բի-Էս Նյուսը, խորհրդակցելուց և նման փաստաբանի անհրաժեշտության մասին համաձայնության գալուց հետո, կվճարի նրա հոնորարը:

Բեմադրություն

Բեմադրություն անելը արգելված է: Սի-ԷՆ-Դի-ի հաղորդումները պիտի լինեն այն, ինչի հավակնում են: Մենք փաստերը ներկայացնում ենք ճիշտ այն տեսքով, ինչ տեսքով գոյություն ունեն իրականության մեջ: Մենք չենք ստեղծում և չենք փոփոխում դրանք: Այսպիսով՝ արտակարգ կարևորության հարց է այն, որ Սի-ԷՆ-Դի-ի բոլոր աշխատակիցները մանրակրկիտ հետևեն հետևյալ հիմնական սկզբունքներին.

- չասել ու չանել ոչինչ, որը դիտողների կամ ունկնդիրների մեջ տպավորություն ստեղծի, թե նկարագրվող ժամանակը, վայրը, իրադարձությունը կամ անձնավորությունը տարբերվում են իրականության մեջ տեսած, լսած ու մեր սարքավորումներով վավերացված փաստերից,

- առանձին իրադրություններում (ասենք, լուսնի վրա տեղաշարժվելը պատկերելու համար) կարող է անհրաժեշտ լինել ավելի ուշ տրվող հաղորդման համար իրադարձությունը վերստեղծել: Սակայն ամեն այդպիսի իրադրությունում.

(i) դիտողի կամ ունկնդրի համար պետք է միանգամայն պարզ լինի այն փաստը, որ վերստեղծված իրադարձություն է հեռարձակվում,

(ii) վերստեղծումը պետք է լինի ռեալ իրադարձության հավաստի վերարտադրությունը:

Այս հիմնական սկզբունքներն անհրաժեշտության բերմամբ շարադրված են ընդհանուր գծերով: Կոնկրետ իրավիճակներում դրանց կիրառմանը վերաբերող բոլոր կասկածներն ու հարցերը պետք է ժամանակին լուծում ստանան Սի-ԷՆ-Դի-ի ղեկավարության կողմից: Սակայն առաջնային սկզբունքը պետք է լինի հետևյալը. «Եթե կասկած ունես՝ մի արա»: Նկարահանող խմբի հետ աշխատող պրոդյուսորները, թղթակիցները և ռեպորտյորները պատասխանատվություն են կրում նկարահանող խմբի գործողությունների համար:

Ցանկացած ծառայող, որը տեղեկություն ունի այն մասին, որ այդ սկզբունքը խախտվել է, պետք է այդ մասին անմիջապես հայտնի Սի-ԷՆ-Դի-ի ղեկավարությանը:

Սի-Բի-Էս-ին չպատկանող աշխատակիցների կամ սարքավորման օգտագործում

Եթե արտադրական նպատակներով Սի-ԷՆ-Դի-ի աշխատակիցները և (կամ) սարքավորումները ժամանում են մեկ այլ աղբյուրից, որը Սի-Բի-Էս-ը չէ, այսինքն՝ կայան-մասնաճյուղ է, անկախ կայան կամ նմանատիպ այլ աղբյուր, ապա հարաբերություններն այդ աղբյուրի հստակ պետք է լինեն: Նրանք պետք է պարզ գիտակցեն, որ արտադրության պրոցեսի նկատմամբ լիակատար

վերահսկողությունը իրականացնելու է Սի-ԷՆ-Դի-ին, որ ծառայողները պիտի ենթարկվեն Սի-ԷՆ-Դի-ի ղեկավարությանը, որ սարքավորումները պիտի օգտագործվեն այնպես, ինչպես որոշում է Սի-ԷՆ-Դի-ն:

Այս սկզբունքը, բնականաբար, չի կարող կիրառվել այն իրավիճակում, երբ ծառայողները և (կամ) սարքավորումները մասնաճյուղի կամ անկախ կայանի կողմից օգտագործվում են իրենց անունից սյուժե ստեղծելու համար, իսկ Սի-ԷՆ-Դի-ն կրկնության կարգով կօգտվի տվյալ ծրագրի արդյունքներից:

Ազատ աշխատակցներից կամ այլ արտահաստիքային աղբյուրներից ստացված նկարահանված նյութը, տեսա-ձայնագրությունները և ուրիշ նյութերը կարող են օգտագործվել Սի-ԷՆ-Դի-ի հաղորդումներում, եթե բավարարում են Սի-ԷՆ-Դի-ի պատասխանատու անձնակազմի պահանջները: Եթե վստահություն չկա նման որևէ նյութի ճշգրտության վերաբերյալ, խնդրո՞ւք առարկա բոլոր հանգամանքները, ներառյալ նաև այդ անվստահության արտահայտումը, պետք է նշվեն հաղորդման մեջ: Իհարկե՝ տեղեկատվական նյութի օգտագործման սահմանփակումներին համապատասխան (էջ):

Անվճար երթևեկի, բնակության, սննդի, ծառայությունների կամ զանազան ընծաների ընդունում

Ստորև բերվող ընդհանուր սկզբունքը և կատարման ենթակա ցուցումները կիրառվում են Սի-Բի-Էս Նյուսի բոլոր աշխատակիցների նկատմամբ, ներառյալ նաև պաշտոնատար անձինք:

Ընդհանուր սկզբունք.

- Իր գործունեության սկզբից ևեթ Սի-Բի-Էս Նյուսը հետամուտ է հիմնական սկզբունքին, այն է. նորությունների ասպարեզում աշխատող անձնակազմը պետք է ազատ լինի ամեն պարտավորությունից, բացի հասարակության առջև ունեցած պարտավորությունների:

Քանի որ վստահությունը կարևոր հատկանիշ է տեղեկատվության ասպարեզում աշխատող յուրաքանչյուր կազմակերպության համար, Սի-Բի-Էս Նյուսի ծառայողներն իրենց պետք է պահեն այնպես, որպեսզի ոչ միայն խուսափեն իրենց ժուռնալիստական անկախությունը և ազնվությունը վարկաբեկելուց, այլև կանխեն նման վարկաբեկման հնարավորությունը: Մենք ընդունում ենք, որ կոնկրետ ցուցումները չեն կարող կանխատեսել ու ընդգրկել բոլոր հնարավոր հանգամանքները, յուրահատկություններն ու նրբերանգներն այդ բարդ ասպարեզում: Եվ մենք չենք կարծում, որ ցուցումները հիմարության աստիճան սահմանափակելու են աշխատակիցներին, ինչպես, օրինակ, հրաժարումը մի գավաթ սուրճից կամ նման այլ բանից: Սակայն հիմնական դրույթը, որ ձգտում են կյանքում արմատավորել ցուցումները, պետք է պարզ լինի. ծառայողները չպիտի ընդունեն բազահայտ կամ ոչ բազահայտ ոչ մի սիրալիրություն, որը կարող է վարկաբեկել իրենց՝ որպես տեղեկատվության ոլորտի աշխատողների: Ցուցումների իմաստին կամ կիրառմանը վերաբերող հարցերը ծառայողները պետք է լուծեն իրենց ղեկավարի հետ:

Ընկերությանը վերաբերող ցուցում-հանգամանքներ

Տեղեկություններ հավաքելու կամ դրա հետ կապված գործուղման ժամանակ կամ ինֆորմացիայի հետ կապված կամ դրան վերաբերող ամեն

կարգի այլ գործողություն իրականացնելիս, ծառայողները չպետք է ընդունեն անվճար երթևեկի, բնակության, ծառայությունների կամ ընծաների առաջարկներ (բացառությամբ չնչին արժեքի հուշանվերներով): Ռեստորանի հրավերները կարող են ընդունվել, սակայն պատահական և ընդունելի հիմքի վրա, եթե

(i) նման հրավերի առաջնահերթ նպատակն է ինֆորմացիա ստանալը կամ կապերի հաստատումը, որոնք կարևոր նշանակություն ունեն տեղեկություն ստանալու համար,

(ii) իրավիճակն այնպիսի ընթացք է ստանում, որ ծառայողի բոլոր փորձերն անձամբ փակելու հաշիվը տոգել տպավորություն են ստեղծում:

- Եթե տեղեկություններ հավաքելու հետ կապված գործուղման ժամանակ կամ ինֆորմացիա ստանալու հետ կապված ամեն կարգի գործողություն իրականացնելիս պահանջվում է երթևեկել տեղից-տեղ, ապա հարկավոր է օգտվել հասարակական և ոչ թե մասնավոր տրանսպորտից: Սակայն այնպիսի պայմաններում, երբ պիտի մասնավոր տրանսպորտ օգտագործվի, քանի որ հասարակական տրանսպորտը բացակայում է (ինչպես, օրինակ, պրեզիդենտի և նրա ծառայակազմի հետ պրեզիդենտի ուղևորությունը լուսաբանելու համար պրեզիդենտական օդանավում գնտվելիս), ծառայողը պարտավոր է տրանսպորտային միջոցի մասնավոր սեփականատերին ժամանակին վճարել տվյալ տարածությամբ երթևեկելու առևտրային արժեքին հավասար ուղեվարձը:

- Սակայն հանգամանքների բերումով կարող է պատահել, որ երթևեկության առևտրային արժեք գոյություն չունի, կամ սահմանված չէ, օրինակ, թռիչք դեպի ավիակիր նավ, կամ մասնակցություն հին ինքնաթիռի լուսաբանման արժանի ցուցադրական թռիչքին, գնացքի կամ մեկ այլ փոխադրամիջոցի ուղևորությանը: Նման հանգամանքներում կարող է ընդունելի համարվել սահմանափակ անվճար ուղևորությունը:

Ընկերությանը չվերաբերող ցուցում-հանգամանքներ

- Ընդհանուր առմամբ, աշխատակիցներն իրենց անձնական ընկերությանը չվերաբերող, գործունեության մեջ պետք է ղեկավարվեն իրենց՝ որպես ժուռնալիստի պատասխանատվության ըմբռմամբ: Այդ ըմբռնումը պետք է ներառի ոչ միայն իրենց անձնական պատկերացումը շահերի բախման պոտենցիալ հավանականության և իրենց ու իրենց կազմակերպության ազնվության շուրջ կասկածների պոտենցիալ հավանականության մասին, այլև այդ ամենի պոտենցիալ ընկալումն ուրիշների կողմից:

- Քանի որ հնարավոր է ինֆորմացիայի ասպարեզում գործող աշխատակիցները մտերմական կապեր ունենան այն մարդկանց հետ, ում մասին անում են կամ հավանական է, որ անեն հաղորդումներ, տվյալ ցուցումներում ոչինչ չպետք է մեկնաբանվի որպես հասարակության մեջ ընդունված սիրալիրությունների նորմալ և ընդունելի փոխանակման արգելք: Սակայն տանտիրոջ և ինֆորմացիայի ասպարեզում աշխատող հյուրի սկզբնական հարաբերությունները պետք է իրոք լինեն բարեկամական ու մտերմական: Եթե ինֆորմացիայի ասպարեզում գործող հյուրը պատճառ ունի ենթադրելու, որ տանտերը գործում է, ելնելով իր

գործական կամ մասնագիտական և ոչ թե անձնական շահերից, կամ որ գործատուն կամ տանտիրոջ հաճախորդը փող է վերցնում ծառայությունների դիմաց, ապա նա չպետք է ընդունի ոչ մի անվճար հյուրասիրություն, կացարան, տրանսպորտային սպասարկում և այլն: Քանի որ հարաբերությունները բարեկամականից վերածվում են գործնականի, պետք է պահպանվեն սույն ցուցումներում շարադրված չափանիշները: Եթե որևիցե կասկած կա այն առթիվ, թե որտե՞ղ են խաչաձևվում բարեկամական և գործնական հարաբերությունները, ապա ինֆորմացիայի ասպարեզում գործող աշխատակիցը պետք է եզրակացնի, որ դրանք իրականում բարեկամական չեն:

- Քանի որ թղթակիցները և ինֆորմացիայի ասպարեզում գործող մյուս աշխատակիցները կարող են հրավեր ստանալ որպես դասախոսներ, նրանք կարող են ընդունել (սակայն՝ ո՛չ կառավարական կազմակերպություններից) ուղևորության, բնակության վարձը և սովորական հոնորարը՝ պայմանով, որ նման պարզևավճարը տրվում է օրինական հիմունքներով մատուցված ծառայությունների դիմաց (այսինքն՝ դասախոսության, հասարակական տեսակետից կարևոր հարցի հրապարակային քննակմանը մասնագետների խմբի կազմում մասնակցելու կամ լսարանի հետ բանավեճ անցկացնելու): Սակայն, ուղևորության վարձի հատուցման, բնակության և ամեն կարգի այլ վճարումների ընդունումը միջոցառմանը ներկա գտնվելու կամ նման ծառայությունների մատուցում չնախատեսող իրադարձությանը մասնակցելու դեպքում, անթույլատրելի է, քանի որ ստեղծում է նախադեպ, որը կարող է ընկալվել որպես իրադարձության կամ վճարողի հավանություն (ենթադրյալ կամ ոչ ենթադրյալ):

- Եթե հովանավորչական խմբի բնույթը կամ հրավերի համար ընտրված ժամանակը հիմք են տալիս եզրակացնելու, թե դասախոսություն կարդալու հրավերն արված է այն նպատակով, որպեսզի ինֆորմացիայի ասպարեզում գործող աշխատակցին կապեն իր շահերին հետամուտ այդ խմբի հետ, եզրակացություն, որ ենթադրում է ինֆորմացիայի ասպարեզում գործող աշխատակցի վրա ներազդման նուրբ միջոցների օգտագործում, - ապա հրավերը չպետք է ընդունվի: Ինֆորմացիայի ասպարեզում գործող աշխատակիցը պետք է հասկանա, որ բարեհաճ վերաբերմունք շահելու ձգտող խմբերի կամ անձանց շրջանակը չի սահմանափակվում սոսկ կառավարական կամ գործարար կազմակերպություններով, այլ այդ շարքում կան և ուրիշները, որոնք շահագրգռված են նրանով, թե ինչ է հաղորդվում նորությունների ծրագրերում: Այսպես կոչված՝ «բարություն արա» տիպի խմբերն իրադարձությունների մասին պատմող հաղորդագրությունների վրա ազդելու նույնպիսի սաստիկ ցանկություն ունեն, ինչպես առավել բացահայտ շահագրգռված կազմակերպությունները:

- Մասնակցությունն ակադեմիական բնույթ կրող սեմինարներին կամ հանդիպումներին պետք է գնահատվի նույնքան բժախնդիր, որքան դասախոսությամբ հանդես գալու հրավերը: Մի բան է, երբ անձինք կամ խմբերը կամենում են, որպեսզի ինֆորմացիայի ասպարեզում գործող աշխատակիցն իր կարծիքը հայտնի որպես փորձագետ, իսկ մեկ այլ բան՝ երբ ուզում են, որ այդ աշխատակիցը հանգի իրենց տեսակետին:

- Չի կարող ընդունվել ավտոմեքենայի արժեքից արված ոչ մի զեղչ, ինչպիսիք են, օրինակ, այսպես կոչված «զեղչերը մամուլի համար», «վաճառքի համար բարենպաստ պայմաններ ստեղծող զեղչերը», (բացառությամբ մանրածախ պայմանների պարագան, երբ զեղչերից սովորաբար օգտվում է գնորդների հիմնական զանգվածը):

Պահանջներ կադրերի նկատմամբ

Կաշառք

1. Արժեքավոր իրերի ընդունումը: Սի-Էն-Դի-ի աշխատակիցներն իրավունք չունեն.

ա. երրորդ դեմքից ընդունել արժեքավոր որևէ բան՝ լինի դա ընծա թե վճարում, որի նպատակն է ներազդել իրենց որոշման վրա,

բ. Սի-Բի-Էս-ի կամ նրա ցանկացած ստորաբաժանման կամ դրանց ընկերության համար կամ դրանց անունից ձեռք բերել, օգտագործել կամ մեկ այլ կերպ ստանալ ցանկացած իր, առարկա, ստեղծագործություն կամ երաժշտական հավաքածու,

գ. որպես բեմական պիտույքներ օգտագործել (կամ օժանդակել օգտագործմանը), ընդգրկել կամ որևէ այլ կերպ հաղորդել ցանկացած արտադրանք, հոդված, ստեղծագործություն կամ երաժշտական հավաքածու,

դ. ցանկացած հաղորդման մեջ հիշատակել (կամ օժանդակել հիշատակմանը) ցանկացած առարկա, իր, ստեղծագործություն, ծառայություն, մասնավոր դեմք, ֆիրմա կամ ընկերություն,

ե. ցանկացած այլ կերպ գործել կամ օժանդակել գործողությանը՝ Սի-Բի-Էս-ի կողմից կամ նրա ստորաբաժանումների կամ դուստր ընկերությունների անունից հանձնելու կամ ստանալու կապակցությամբ:

«Հանձնված» և «վճարված» հասկացությունները ենթադրում են ոչ միայն տեղ հասցնելը կամ աշխատակցին կամ աշխատակցի կողմից առանձնացված մեկ այլ անձի կամ անձանց արժեքավոր ինչ-որ բան հանձնելը, այլ նաև տեղ հասցնելը և աշխատակցին կամ աշխատակցի կողմից առանձնացված մեկ այլ անձի կամ անձանց՝ նրա կամ նրանց համար պրակտիկ արժեք ներկայացնող ինչ-որ բանի հանձնելը, նույնիսկ եթե այդ արժեքավոր իրը հետագայում վերադարձվելու է տիրոջը:

2. Վճարումը որևէ արժեքավոր բանով: Սի-Բի-Էս-ի աշխատակիցներն ու ծառայողները իրավունք չունեն.

ա. որևէ արժեքավոր բանով վարձահատույց լինել երրորդ կողմին՝ այդ երրորդ կողմի որոշման վրա ներազդելու նպատակով,

բ. գնել, օգտագործել կամ մեկ այլ կերպ ձեռք բերել Սի-Բի-Էս-ի ցանկացած արտադրանք, ստեղծագործություն կամ ծառայություն,

գ. որպես բեմական պիտույքներ օգտագործել (կամ օժանդակել օգտագործմանը), ընդգրկել կամ որևէ այլ կերպ հաղորդել ցանկացած արտադրանք, հոդված, ստեղծագործություն կամ երաժշտական հավաքածու,

դ. ցանկացած հաղորդման մեջ հիշատակել (կամ օժանդակել հիշատակմանը) ցանկացած առարկա, իր, ստեղծագործություն, ծառայություն, մասնավոր դեմք, ֆիրմա կամ ընկերություն,

ե. ցանկացած այլ կերպ գործել կամ օժանդակել գործողությանը՝ Սի-Բի-Էս-ի կողմից կամ վերջինիս կամ նրա ստորաբաժանումների կամ դուստր ընկերությունների անունից հանձնելու կամ ստանալու կապակցությամբ:

3. Բացառություն: Վերոհիշյալը չի տարածվում այն վճարումների վրա, որոնք բացահայտ ընդունվում կամ տրվում են սովորական արտադրական գործունեության պրոցեսում կամ սոցիալական նպաստների ձևով: Էջ-ում ի թիվս այլոց մանրամասն դիտարկվում է նման վճարումների հետ վարվելու կարգը:

4. Սի-Էն-Դի-ի ցանկացած աշխատակից կամ աշխատող սույն կանոնների խախտման համար ենթակա է աշխատանքից ազատվելու:

Կողմնակի գործունեության սահմանափակում

Սի-Էն-Դի-ի աշխատակիցներն իրավունք չունեն զբաղվելու կողմնակի գործունեությամբ, որը հակասում է կամ իջեցնում նրանց աշխատանքի արժեքը Սի-Էն-Դի-ում: Այս կապակցությամբ և ի լրումն աշխատանքի վերցման անհատական պայմանավորվածությունների, ընդունված են հետևյալ կանոնները.

Աշխատակիցների կողմնակի հեղինակային գործունեությունը սահմանափակվում է ժամանակ առ ժամանակ հոդվածների կամ գրքերի ստեղծմամբ. օպերատիվ նորություններ պարունակող նյութերի պատրաստումը, թեկուզև ոչ պարբերաբար, արգելված է, ինչպես նաև, եթե նյութը վերաբերում է վիճելի հարցերի, գործում են հաջորդ բաժնի դրույթները: Կողմնակի պատրաստված նյութերում չի թույլատրվում հաղորդել այն նորությունները, որոնք նախկինում չեն տրվել Սի-Բի-Էս Նյուսոլվ հեռարձակելու համար:

Հասարակական դիրքորոշումը վիճելի հարցերում

Այն աշխատակիցները, որոնք մասնավոր կարգով մասնակցում են վիճելի հարցերի շուրջ հասարակական շարժմանը, ներառյալ կուսակցական քաղաքական ինտրարշավները՝ մեկուսացվում են այդ վիճելի հարցին առնչվող նորությունների հետ աշխատելուց կամ, եթե դա բավարար չէ, արձակուրդ են վերցնում իրենց հաշվին¹²: Այս կանոնի հիմքում

¹² Վարչական-կազմակերպչական հանգամանքները կարող են այնպես դասավորվել, որ առանց վարձատրման արձակուրդը կամ որոշակի ուղղությամբ աշխատանքից մեկուսացնելը Սի-Էն-Դի-ին կզրկեն աշխատակցին ապագայում օգտագործելու հնարավորությունից: Այդ դեպքում կարող է ծագել աշխատակցին ազատելու անհրաժեշտություն, սակայն սուսկ այն բանից հետո, երբ կօգտագործվեն բոլոր հնարավորությունները խուսափելու դրանից՝ նրան աշխատանքի այլ տեղամաս հանձնարարելով:

ընկած է այն ենթադրությունը, որ այդօրինակ հասարակական դիրքորոշման կողմնակից աշխատողը առնվազն կորցնում է օբյեկտիվության երևույթը:

Ռադիո (հեռուստա) հաղորդումներ. 23 նոյեմբերի 1977 թ.

Սի-Էն-Դի-ի ծառայողները և աշխատողները չպետք է մասնակցեն.

(i) հեռուստատեսային ծանուցումներին (անոնսներին), առևտրային հաղորդումներին կամ ներածական հաղորդումներին կամ զբաղվել այլ գործունեությամբ՝ կապված գովազդատուի գործունեության կամ արտադրանքի հիշատակման հետ¹³,

(ii) ցանկացած զվարճալի ծրագրի, վարիետի կամ բանավոր ներկայացման (թոկ-շոուի)՝ որպես հաղորդավար, դերասան կամ այլ մասնակից,

(iii) ցանկացած տիպի ֆիլմի արտադրության,

(iv) ռադիոհաղորդումների, որոնք չեն ստեղծվել Սի-Բի-Էս Նյուսում, բացառությամբ օրիգինալ լրատվական նյութերի կամ հրատապ պրոբլեմների վերաբերող հարցազրույցների, ուր Սի-Էն-Դի-ի աշխատողները հանդես են գալիս հարցազրույց սովորների դերում:

Որոշ դեպքերում թույլ են տրվում բացառություններ (iv) կետում նախատեսված սահմանափակումներից, սակայն միայն Սի-Էն-Դի-ի Պրեզիդենտի որոշմամբ: Նման բացառությունները սովորաբար սահմանափակվում են.

ա. կողմնակի ռադիոհեռուստատեսային հաղորդումներով, որոնք իրենցից ներկայացնում են օրիգինալ վավերագրական կամ հասարակական-քաղաքական թեմաներով հաղորդումներ, և ոչ թե «խոսակցական» կամ զվարճալի հաղորդումներ, ընդ որում՝ այն դեպքերում, երբ կողմնակի հաղորդման հիմնական թեման ժուռնալիստիկայի հարցերն են,

բ. գովազդային ներածականով Սի-Էն-Դի-ի (կամ Սի-Բի-Էս-ի մասնաճյուղերի) անունից:

Սի-Բի-Էս-ի բոլոր աշխատողները պետք է խուսափեն իրենց անձնական շահերի բախումից Սի-Բի-Էս-ի շահերի հետ: Հակառակ դեպքում նրանք կարող են ազատվել աշխատանքից: Այս մասին մանրամասն հրահանգին ծանոթանում է Սի-Էն-Դի-ի յուրաքանչյուր նոր ընդունվող աշխատակից: Հիմնական գործունեության հարցերի գծով փոխարեզիդենտից կարելի է ստանալ այդ հրահանգի օրինակը: Աշխատակիցները պատասխանատվություն են կրում, որ ո՛չ իրենք, ո՛չ էլ իրենց մերձավորագույն ազգակիցները չունենան այդ քաղաքականությանը

¹³ Կա մի բացառություն: Թղթակիցները կարող են իրենց աշխատանքները զետեղել ազդատախտակի վրա և ռադիոնորությունների հաղորդմանը նախորդող գովազդային հայտարարությունների ներածական մասում, սահմանափակվելով սոսկ ապրանքի կամ հովանավորի հիշատակմամբ առանց մանրամասն պարզաբանումների: Ապրանքի կամ հովանավորի նման հիշատակումը կարող է անընդունելի լինել ապրանքի որոշ տեսակների համար, և բոլոր դեպքերում ենթակա է համաձայնեցման Սի-Էն-Դի-ի ղեկավարության հետ:

հակասող շահեր և չզբաղվեն այդպիսի գործունեությամբ: Եթե աշխատակիցը վստահ չէ՝ արդյոք այդ շահերը կամ նման գործունեությունը հակասում են, թե ոչ, ապա պարտավոր է այդ մասին զեկուցել Սի-Բի-Էս-ի տնօրենների խորհրդի կոնֆլիկտային հանձնաժողովին կամ այդ հարցերը քննելու համար տնօրենների խորհրդի նշանակած պատասխանատու անձի:

Սի-Էն-Դի-ի գաղտնի ինֆորմացիայի հետ կապված պարտավորությունների չխախտումը ապահովելու նպատակով՝ այդ ինֆորմացիայի տարածմանն առնչվող բոլոր աշխատակիցները կրում են լրացուցիչ պարտավորություններ: Այդ աշխատակիցներից յուրաքանչյուրն ի լրումն իր պարտավորությունների, որոնք շարադրված են նախորդ պարագրաֆում, պարտավոր է անմիջականորեն իր գործունեությունը տնօրինող Սի-Էն-Դի-ի առաջին փոխարեզիդենտին զեկուցել իր պաշտոնական պարտականությունների և կողմնակի գործունեության և կամ գործունեության և իր մերձավորագույն ազգականների ֆինանսական շահերի միջև տեղ գտած կամ հնարավոր բոլոր հակասությունների մասին: Ձեկուցագիրը հանձնվում է ամենակարճ ժամկետում, նախքան այդ աշխատակցի կողմից նման հակասության հետ կապված պարտականությունների կատարումը: Սի-Էն-Դի-ի ղեկավարությունը հանգամանքներին համաձայն կձեռնարկի համապատասխան միջոցներ, ներառյալ աշխատակցի տեղափոխումը այլ տեղամաս և հակասության էության հրապարակումը եթերում:

Գործարքներ արժեթղթերի հետ (1 հոկտեմբերի 1979 թ.)

Նյութի հավաքումը ենթադրում է ծանոթություն զանազան կորպորացիաների հետ: Երբեմն Սի-Բի-Էս-ի ռեպորտյորները մի տեսակ դառնում են նման կազմակերպությունների աշխատակիցը, տեղեկանալով գաղտնի կամ ծառայողական ինֆորմացիային, որը մինչ այդ երբեք չի հրապարակվել, և որի հրապարակումը կարող է անդրադառնալ այդ կորպորացիայի արժեթղթերի գնի վրա: Բացի այդ, կորպորացիայի մասին նույնիսկ հանրամատչելի ինֆորմացիայի տարածումը Սի-Բի-Էս-ի հաշվետվություններ???, կարող են նշանակալի ազդեցություն գործել հասարակության կողմից տվյալ կորպորացիայի ընկալման և, հնարավոր է նաև, նրա արժեթղթերի գնի վրա: Սի-Էն-Դի-ի աշխատակիցների կողմից նման ինֆորմացիայի օգտագործումը շահադիտական նպատակներով կամ կորպորացիային վերաբերող ծառայողական ինֆորմացիայի բացահայտումը այլ միջոցներով, քան լուրերն են կամ հասարակական-քաղաքական հաղորդումները, միանգամայն անթույլատրելի է և կարող է վնասել Սի-Բի-Էս Նյուսի վարկին ու հանգեցնել դատական գործի հարուցման քաղաքացիական կամ քրեական դատարանում: Նման գործողությունները պատժվում են պարտադիր կարգով:

Նույնիսկ Սի-Բի-Էս Նյուսի հաղորդման մեջ կորպորացիային վերաբերող ինֆորմացիայի հրապարակումից հետո էլ, այդ հաղորդմանը հաջորդող սահմանված ժամանակահատվածում, կարող են պահպանվել հաղորդմանը

մասնակցած աշխատակիցների կողմից այդ կորպորացիայի բաժնետոմսերի ձեռքբերման իրավաբանական սահմանափակումները: Դրանց նպատակն է հնարավորություն տալ բոլոր ինվեստորներին ստանալու այդ ինֆորմացիան, որպեսզի բոլորն էլ հավասար հնարավորություններ ունենան կապիտալի ներդրման վերաբերյալ որոշում ընդունելիս:

Ընկերությունների քաղաքականությունը նախատեսում է երեք բորսայական օր՝ որպես նվազագույն ժամկետ, ինֆորմացիայի հրապարակումից հետո, երբ Սի-Բի-Էս-ի՝ կորպորացիային նվիրված հաղորդմանն առնչություն ունեցող աշխատակիցները կարող են գնել կամ վաճառել այդ կորպորացիայի արժեթղթերը: Սակայն, բացահայտ գաղտնիությունը՝ կապված կորպորացիայի արժեթղթերի վաճառման կամ գնման հետ Սի-Բի-Էս Նյուսի այն աշխատակիցների կողմից, որոնք մասնակցել են այդ կորպորացիայի մասին նյութի պատրաստմանը, կարող է պահանջել ավելի երկար ժամանակով ձեռնպահ մնալ այդ արժեթղթերի հետ կապված գործարքներից: Կոնկրետ իրավիճակներում շարադրյալ պահանջների կիրառելիության բոլոր հարցերով հարկավոր է դիմել Սի-ԷՆ-Դի-ի Պրեզիդենտին, որն էլ իր հերթին անհրաժեշտության դեպքում կխորհրդակցի իրավական բաժնուն: (Պատմական տեղեկանքը կարելի է գտնել Պրեզիդենտի ընկերության քաղաքականության մասին 1978 թվականի նոյեմբերի 22-ի զեկուցման մեջ, որտեղ արժեթղթերի առևտրի հարցը դիտարկվում է ավելի ընդհանուր պլանով):

Դասախոսություններ և ելույթներ

Դասախոսություններն ու ելույթները պետք է նախատեսել այնպիսի ժամանակ, այնպիսի հաճախականությամբ և այնպիսի պայմաններով, որ դրանք չխանգարեն Սի-ԷՆ-Դի-ի աշխատակցին կատարելու իր պարտականությունները՝ ներառյալ օպերատիվ առաջադրանքի հնարավորությունը: Բացի այդ, վերը, «*Չասարակական դիքորոշումը վիճելի հարցերում*» բաժնում, նկարագրված կարգը և ընկերության քաղաքականության հարցերը՝ կապված դասախոսությունների և ելույթների հետ, նույնպես միանգամայն կիրառելի են:

Շնորհանդեսներ ու հանդիսավոր հաղորդումներ (1 նոյեմբերի 1976 թ.)

Աշխատակիցները՝ անկախ այն բանից ստանում են պարգևավճար, թե՛ ոչ, իրավունք չունեն մասնակցել շնորհանդեսների ու հանդիսավոր հաղորդումների կապված.

(i) ապրանքների, ծառայությունների, ձեռնարկությունների կամ ընկերությունների հետ,

(ii) գործի՝ անկախ դրա նշանակությունից կամ ոչ կուսակցական բնույթից, հետ

(iii) ցանկացած տիպի հրատարկության հետ, ներառյալ գիրքը՝ առանց Սի-Էն-Դի-ի Պրեզիդենտի կամ նրա նշանակած անձի նախնական համաձայնության¹⁴:

Ծառայություններ պետական կազմակերպություններին

Աշխատակիցները (հաստիքային, գործարքային, սթրինգները կամ այլոք) Սի-Բի-Էս-ու-ն իրենց աշխատելու ընթացքում իրավունք չունեն վարձվելու կամ ցանկացած կարգի ծառայություններ մատուցելու պետական կազմակերպությանը, ինչպես տեղական, այնպես էլ արտասահմանյան:

Արժեքավոր ինֆորմացիայի կողմնակի տարածում

Աշխատակցի ստացած յուրաքանչյուր արժեքավոր ինֆորմացիա (գրավոր կամ այլ կերպ) անհապաղ պետք է հանձնվի Սի-Էն-Դի-ին: Աշխատակիցն այդ ինֆորմացիայի նույնիսկ մի մասը չպետք է հայտնի որևէ մեկին՝ բացառությամբ Սի-Էն-Դի-ի Պրեզիդենտի հատուկ թույլտվության:

Անձնական մասնակցություն հաղորդմանը

Սի-Էն-Դի-ի աշխատակիցները, որոնք պատմում են իրադարձության մասին ոչ մի դեպքում, ոչ մի ձևով և ոչ մի պատճառաբանությամբ չպիտի մասնակցեն այդ իրադարձությանը: Մեր խնդիրն է՝ պատմել իրադարձության մասին և տեսա-ձայնագրել այն, այլ ոչ թե՝ հրահրել և կազմակերպել:

¹⁴ Բայց նրանք կարող են մասնակցել գովազդային գործունեությանը ի շահ Սի-Էն-Դի-ի ռադիոհաղորդումների և Սի-Բի-Էս-ի մասնաճյուղերի լրատվական հաղորդումների: